

Ա.Հ. ԲԱՅԱԴՅԱՆ
Վ.Մ. ԿԱՐՃԻԿՅԱՆ

**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖԻՆԱՆՍՆԵՐ**
(ուսումնական համառոտ դասընթաց)

ԵՐԵՎԱՆ
 **ԼԻՄՈՒՇ**
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԳ 336 (07)
ԳՄԴ 65.9(2)26 ց7

Բ 260 Հրատարակման է ներկայացրել Հայաստանի պետական ազգարային համալսարանի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնը
Տպագրվում է ՀՊԱՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ

Մասնագիտական խմբագիր՝ Հարությունյան Վ.Լ., տ.գ.դ., պրոֆեսոր
Գրախոսներ՝ Բաղանյան Լ.Հ., տ.գ.թ., պրոֆեսոր
Եղիկյան Ա.Թ., տ.գ.թ., դոցենտ

Բ 260 Բայադյան Ա. Հ.

Բյուջետային կազմակերպությունների ֆինանսներ (ուսումնական համառոտ դասընթաց) / Ա.Հ. Բայադյան, Վ.Մ. Կարճիկյան; մասն. խմբ.՝ Վ.Լ. Հարությունյան. -Երևան.: Լիմուշ, 2010 - 88 էջ:

Ուսումնական համառոտ դասընթացում ամբողջական տեսքով ներկայացված է բյուջետային կազմակերպությունների ֆինանսների կազմակերպման հիմքերը, սոցիալական ոլորտի կազմակերպությունների ֆինանսավորումը, կրթության բնագավառի, գիտության, մշակույթի, առողջապահության, կառավարման, իրավապահ և գյուղատնտեսական բյուջետային կազմակերպությունների պլանավորման և ֆինանսավորման առանձնահատկությունները:

Այն իր էությամբ և կարևորությամբ ուղեցույց է տնտեսագիտական թեքումով բոլոր ուսումնական հաստատությունների դասախոսների, ուսանողների, մագիստրների, ինչպես նաև դրանով հետաքրքրվող համապատասխան մասնագետների համար:

ՀՏԳ 336 (07)
ԳՄԴ 65.9(2)26 ց7

ISBN 978-9939-64-057-0

Բայադյան Ա.Հ.
Կարճիկյան Վ.Մ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅԹՈՒՆ

Ներածություն 6

ԳԼՈՒԽ 1. Բյուջետային կազմակերպությունների ֆինանսների կազմակերպման հիմքերը 8

1.1. Բյուջետային կազմակերպություն հասկացությունը .. 8

1.2. Բյուջետային կազմակերպությունների ֆինանսների տեղը ՀՀ ֆինանսական համակարգում 10

1.3. Բյուջետային կազմակերպությունների և ֆինանսավարկային համակարգի փոխհարաբերությունները ... 13

1.4. Բյուջետային միջոցների հաշիվների հաշվառումը 14

1.5. Ինքնուրույն աշխատած եկամուտների հաշիվների հաշվառումը 16

1.6. Բյուջետային կազմակերպությունների փոխհարաբերությունները պետական վերահսկող մարմինների հետ 19

ԳԼՈՒԽ 2. Բյուջետային կազմակերպությունների ֆինանսական ռեսուրսները 22

2.1. ՀՀ Բյուջետային համակարգի միջոցները 22

2.2. Բյուջետային կազմակերպությունների սեփական միջոցները 24

ԳԼՈՒԽ 3. Բյուջետային կազմակերպությունների ծախսերը և դրանց պլանավորումը 28

3.1. Բյուջետային կազմակերպությունների ծախսերի դասակարգումը 28

3.2. Բյուջետային կազմակերպությունների հիմնական ծախսերը 30

3.3. Բյուջետային կազմակերպություններում ծախսերի պլանավորումը 33

3.4. Բյուջետային ծախսերի պլանավորման մեթոդները .. 35

3.5.	Բյուջետային կազմակերպությունների ծախսերի առանձին տեսակների հաշվարկներ	38
Գ-ԼՈՒԽ 4.	Կրթության, գիտության, գյուղատնտեսության և մշակույթի ոլորտի բյուջետային կազմակերպությունների ֆինանսները	41
4.1.	Հանրակրթական դպրոցների ծախսերի պլանավորումը և դրանց բյուջետային ֆինանսավորումը	41
4.2.	Հանրակրթական դպրոցների ֆինանսական պլանավորման հաշվարկը	42
4.3.	Բարձրագույն ուսումնական հաստատությունների ծախսերի պլանավորումը և ֆինանսավորումը	44
4.4.	Գիտական հիմնարկների պլանավորումը և ֆինանսավորման առանձնահատկությունները	47
4.5.	Գյուղատնտեսության ոլորտի բյուջետային կազմակերպությունների պլանավորման և ֆինանսավորման առանձնահատկությունները	49
4.6.	Մշակույթի ոլորտի բյուջետային կազմակերպությունների ֆինանսների առանձնահատկությունները ..	54
Գ-ԼՈՒԽ 5.	Առողջապահական և կառավարման ոլորտների բյուջետային կազմակերպությունների ֆինանսները .	59
5.1.	Առողջապահության ֆինանսավորումը	59
5.2.	ՀՀ պետական իշխանության մարմինները և նրանց ֆինանսավորման աղբյուրները	62
5.3.	Ազգային պաշտպանության մարմինների, արդարադատական գործունեության և պետության անվտանգության ապահովման ֆինանսները	66
Գ-ԼՈՒԽ 6.	Բյուջետային կազմակերպության ֆինանսական աշխատանքների կազմակերպման հիմքերը և գործունեության հսկողությունը	69

6.1. Բյուջետային կազմակերպության ֆինանսական ծա- ռայությունը, գործառույթները	69
6.2. Բյուջետային կազմակերպությունների ֆինանսա- տնտեսական գործունեության հսկողությունը	73
6.3. Վերստուգման աշխատանքների խնդիրները	77
Օգտագործված գրականության ցանկ	83
Հավելված 1	84
Հավելված 2	85
Հավելված 3	87

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բյուջետային կազմակերպությունները մեր երկրում գործող բազմաթիվ կազմակերպությունների խմբերից մեկն են: Նրանք այն հիմնարկություններն ու կազմակերպություններն են, որոնց պահպանման ծախսերը ապահովվում են պետական և տեղական (համայնքային) բյուջեների կողմից:

Պետության բյուջետային համակարգում կենտրոնացվում են երկրի ներսում ստեղծվող ֆինանսական միջոցների կեսից ավելին: Այդ միջոցներն իրենց էությամբ արտահայտում են բյուջետային կազմակերպությունների ֆինանսների դերն ու նշանակությունը երկրի տնտեսության մեջ:

Բյուջետային կազմակերպությունների մեծ մասը կատարում են տարբեր սոցիալական գործառույթներ: Այդ իսկ պատճառով էլ բյուջետային կազմակերպություններին հատկացված միջոցների մեծությամբ և նրանց օգտագործման արդյունավետությունից է կախված հասարակության առջև դրված սոցիալական խնդիրների լուծումը:

Ուստի վերոնշյալ հարցերով են կանխորոշված «Բյուջետային կազմակերպությունների ֆինանսներ» ուսումնական համառոտ դասընթաց առարկայի նշանակությունը մասնագետների պատրաստման գործընթացում, որոնք աշխատելու են ֆինանսական մարմիններում, բյուջետային կազմակերպություններում և կառավարման այլ ոլորտներում:

Անհրաժեշտ է նշել, որ սույն ուսումնական համառոտ դասընթացը, հայերեն լեզվով, առաջին անգամ հատուկ նախապատրաստվել է ԲՈՒՀ-երի ուսանողների համար, որտեղ պատրաստվում են ֆինանսահաշվային ոլորտի մասնագետներ:

Այդ նպատակով սույն ուսումնական համառոտ դասընթացն իր առջև խնդիր է դրել համալիր շարադրել բյուջետային կազմակեր-

պությունների ֆինանսների վերաբերյալ տեսական, գործնական և կազմակերպչական հարցեր:

Սիաժամանակ, «Բյուջետային կազմակերպությունների ֆինանսներ» առարկայի ուսուցումը հնարավորություն է տալիս ուսանողներին, մագիստրանտներին ծանոթանալ բյուջետային կազմակերպությունների գործառույթներին, ֆինանսական միջոցների կազմավորման աղբյուրներին, դրանց օգտագործման գլխավոր ուղղություններին: Չեռք բերել գործնական հմտություններ բյուջետային պլանավորման համար, նախապատրաստել հաշվարկներ բյուջետային կազմակերպությունների նախահաշիվ-ների կազմման և հսկողական աշխատանքների իրականացման վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 1. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Բյուջետային կազմակերպություն հասկացությունը

Բյուջետային կազմակերպության ստեղծվում են ՀՀ պետական կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառավարում, սոցիալ-մշակույթային, գիտատեխնիկական և ոչ առևտրային բնույթի այլ գործառույթներ իրականացնելու նպատակով, որոնք ֆինանսավորվում են համապատասխան բյուջեներից՝ տեղական կամ պետական, եկամուտների և ծախսերի նախահաշիվների հիման վրա:

Սույն սահմանումից բխում է, որ «Բյուջետային կազմակերպություն» կարգավիճակ ունեն միայն այն կազմակերպությունները, որոնք միաժամանակ բավարարում են հետևյալ հատկանիշներին:

1. Բյուջետային կազմակերպության հիմնադիրներ կարող են հանդես գալ ՀՀ պետական կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ դրանց առընթեր բաժնետիրական ընկերությունները, կոոպերատիվները և նմանատիպ այլ տնտեսավարող սուբյեկտները չեն կարող ստեղծել բյուջետային կազմակերպություններ:
2. Բյուջետային կազմակերպությունների ստեղծման հիմնադիր փաստաթղթերում կարող են լինել բացառապես ոչ առևտրային բնույթի գործառույթներ: Միաժամանակ չպետք է հասկանալ այնպես, որ բյուջետային կազմակերպություններին արգելված է կատարել վճարովի ծառայություններ և ինքնուրույն ստանալ եկամուտներ:
3. Բյուջետային կազմակերպությունը պետք է ֆինանսավորվի ինչպես ՀՀ պետական բյուջեից, այնպես էլ համայնքային կամ պետական արտաբյուջետային միջոցների բյուջեներից:

Նշված հատկանիշը ունի նաև հետևյալ առանձնահատկությունը, այն է, որ բյուջեից ֆինանսավորվող ամեն մի կազմակերպություն չի կարող հանդես գալ որպես բյուջետային: Բյուջետային միջոցները հատկացվում են ոչ միայն բյուջետային կազմակերպություններին, այլև առևտրային կառույցներին: Դա իրականացվում է բազմաթիվ նպատակներով, սկսած տարբեր ապրանքների գնումներից՝ պետական կամ համայնքային նպատակների համար և ավարտված ֆինանսական աջակցությունից՝ դոտացիաների, սուբվենցիաների և սուբսիդիաների տեսքով:

4. Բյուջետային կազմակերպությունների ֆինանսական պլանավորման հիմք են հանդիսանում եկամուտների և ծախսերի նախահաշիվները, որոնք կազմվում են մինչև ֆինանսական տարվա սկսվելը:

Բյուջետային կազմակերպությունները կարող են դասակարգվել նաև հետևյալ հատկանիշներով.

1. Իրականացվող գործառնություններից կախված բյուջետային կազմակերպությունները կարող են հանդես գալ բյուջեյի ծախսերի ֆունկցիոնալ դասակարգմանը համապատասխան: Նշված հատկանիշով կարելի է առանձնացնել այն բյուջետային կազմակերպությունները, որոնք իրականացնում են պետական գործառնություններ և ստանում են ֆինանսավորում բյուջետային համապատասխան բաժիններով, այդ թվում՝

- դատական իշխանություն, այդ թվում՝ Սահմանադրական դատարան,
- միջազգային գործունեություն, դեսպանատներ ու ներկայացուցչություններ արտասահմանում և այլն:

2. Կախված ֆինանսավորման աղբյուրներից բյուջետային կազմակերպությունները կարող են բաժանվել հետևյալ խմբերի.

- ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող,

- ՀՀ տեղական կամ այլ կերպ համայնքային բյուջեներից ֆինանսավորվող:
3. Ըստ ֆինանսավորման աղբյուրների բյուջետային կազմակերպությունները կարող են բաժանվել երկու խմբի.
- ա) բյուջետային կազմակերպություններ, որոնք կատարում են վճարովի ծառայություններ ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար և ունեն սեփական միջոցների աղբյուրներ,
 - բ) բյուջետային կազմակերպություններ, որոնք չեն կատարում վճարովի ծառայություններ ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար և միաժամանակ չունեն սեփական միջոցների աղբյուրներ:

1.2. Բյուջետային կազմակերպությունների ֆինանսների տեղը ՀՀ ֆինանսական համակարգում

Բյուջետային կազմակերպությունների ֆինանսների տեղը ՀՀ ֆինանսական համակարգում կարևորվում է այն հատուկ դերով, ըստ որի զբաղեցնում են բյուջետային կազմակերպությունները պետության գործառնություններն ապահովելու գործունեությամբ: Վերջինս որոշակիորեն իրականացվում է հենց բյուջետային կազմակերպությունների կողմից: Անհրաժեշտ է առանձնացնել բյուջետային կազմակերպությունների հետևյալ առանձնահատկությունները՝

1. փոխադարձ սերտ կապ բյուջեի (պետական, համայնքային և արտաբյուջետային) հետ, որից ֆինանսավորվում է բյուջետային կազմակերպությունների ծախսերի հիմնական մասը: Բյուջեի ցանկացած փոփոխություն առաջին հերթին անդրադառնում է բյուջետային կազմակերպությունների ֆինանսների վրա: Բյուջեի մուտքերի անբավարար լինելը բերում են բյուջետային կազմակերպությունների ծախսերի թերի ֆինանսավորմանը: Համա-

պատասխան մակարդակի բյուջեի մուտքերի գերակատարումների դեպքերում բյուջետային կազմակերպությունները ստանում են լրացուցիչ ֆինանսավորում: Այդ առանձնահատկությունների շնորհիվ բյուջետային կազմակերպությունների ֆինանսները սերտորեն փոխկապակցված են պետական կենտրոնացված ֆինանսների և, ավելի քան ֆինանսական համակարգի բոլոր այլ օղակների հետ:

2. Բյուջետային կազմակերպությունները կարող են մատուցել որոշակի վճարովի ծառայություններ, ձևավորելով իրենց ֆինանսական ռեսուրսների մասն ինքնուրույն աշխատած եկամուտների հաշվին, ինչը թույլ է տալիս դրանց դասել տնտեսավարող սուբյեկտների շարքին:

Նշված երկու առանձնահատկությունները հնարավորություն են տալիս բնորոշել բյուջետային կազմակերպությունների դերը, կենտրոնացված ֆինանսական ռեսուրսների միջոցով, որպես միջանկյալ օղակ. ֆինանսական կազմակերպությունների ու տնտեսավարող սուբյեկտների միջև:

3. Միջոցների ծախսման ինքնուրույնության բացակայությունը: Այսինքն, քանի որ բյուջետային կազմակերպությունները հիմնականում գոյատևում են բյուջետային ֆինանսավորմամբ, ուստի պետության կողմից իրականացվում է խիստ հսկողություն բյուջետային միջոցների ռացիոնալ և խնայողաբար ծախսումների վրա, ի տարբերություն առևտրային կազմակերպությունների, որոնց բնորոշ է ֆինանսական միջոցների ծախսման ինքնուրույնության սկզբունքը:

Բյուջետային հիմնարկների ֆինանսների կազմակերպման հիմնական սկզբունքները հետևյալն են՝

1. Արդեն հատկացված և ինքնուրույն աշխատած ֆինանսական միջոցների նպատակային օգտագործումը:

Ի տարբերություն բոլոր այլ հիմնարկությունների, բյուջետային կազմակերպությունները պետք է խիստ պահպանեն միջոցների նպատակային ծախսումները, որոնց համար այդ միջոցները հասկացված են: Եթե առևտրային կազմակերպությունները ազատ են իրենց ծախսումների մեջ՝ (նյութական ռեսուրսների ձեռք բերում, աշխատավարձ և այլն), ապա բյուջետային կազմակերպություններն այդպիսի ազատ գործողությունների իրավունք չունեն:

2. Խիստ տարբերակել բյուջետային հարկադրումները և ինքնուրույն աշխատած ֆինանսական միջոցները: Նշված երկու միջոցներն էլ պահպանվում են առանձին հաշիվներում, և որոնց համահունչ է առանձին խմբի համար կազմված առանձին նախահաշիվներն ու հաշվետվությունները:
3. Բյուջետային անձեռնմխելիություն, որն իրենից ներկայացնում է այնպիսի իրավական ռեժիմ, որի դեպքում շրջանառությունից զանձվում է բյուջետային միջոցներ միայն դատական ակտերի հիման վրա, այդ թվում՝
 - թերֆինանսավորման փոխհատուցում, եթե զանձվող միջոցները հաստատվել են օրենդրությամբ սահմանված կարգով, բյուջետային ծախսումների կազմում,
 - ֆիզիկական և իրավաբանական անձանց հասցված վնասի փոխհատուցում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների հետևանքով:
4. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հսկողության իրականացում՝ ֆինանսական ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործման վրա:

1.3. Բյուջետային կազմակերպությունների և ֆինանսավարկային համակարգի փոխհարաբերությունները

Բյուջետային կազմակերպությունների և վարկային համակարգի փոխհարաբերությունների առանձնահատկությունները կայանում են բյուջետային հիմնարկների ֆինանսների կազմակերպման սկզբունքներով: Հիմնական ծառայությունները, որոնք առևտրային բանկերը մատուցում են իրենց հաճախորդներին, հետևյալ են՝

- հաշվարկա-դրամարկղային սպասարկումը, դա ծառայությունների փաթեթ է, որոնք մատուցում են առևտրային բանկերն իրենց հաճախորդներին, նրանց հետ կնքված պայմանագրերի համաձայն: Հաշվարկա-դրամարկղային սպասարկումն իր մեջ ներառում է հաշվարկային և դրամարկղային ծառայությունների մատուցումներ,
- հաշվարկային ծառայությունների մատուցումները, որոնք իրականացվում են ՀՀ Կենտրոնական բանկի հաշվարկային ցանցի միջոցով, և միաժամանակ բացի դրանից առևտրային բանկերը կատարում են հաշվարկային ծառայություններն առանց ՀՀ Կենտրոնական բանկի մասնակցության: Դրանք միևնույն բանկի տարբեր մասնաճյուղերի միջև կատարվող փոխանցումներն են, որը ներառում է վճարային փաստաթղթերի մշակման լրիվ պարբերաշրջանը:

Վերջինիս թվին են դասվում հետևյալները՝

1. վճարողներից հաշվարկային փաստաթղթերի ընդունում (անկախ վճարման տեսակից և հաշվարկային փաստաթղթերի տրամադրման ձևից՝ թղթային կրիչներ, մագնիսական կրիչներ, կապուղիների միջոցով) և դրանց ստացում,
2. մշակման համար ընդունված փաստաթղթերի հանձնում, օրինակ թղթային կրիչների վրա ՀՀ Կենտրոնական բանկի դրոշմա-

նիշով հաշվարկային փաստաթղթերի ընդունում և հաղորդում տարբեր կապուղիներով,

3. համապատասխան հաշվարկներով տեղեկատվական տեխնոլոգիաների ավտոմատ մշակում (էլեկտրոնային հաղորդագրությունների կազմում փոստային և հեռագրային ավիզո՝ օգտագործելով միջմասնաճյուղային շրջանառության համակարգը, տեղեկատվության ավտոմատ մշակում),
4. հաշվարկային փաստաթղթերի տեղափոխում,
5. հաշվարկների մասնակիցներին փաստաթղթերի տրամադրում, օրինակ գումարներ ստացողներին՝ հաշվարկային փաստաթղթերի թղթային կրիչների կամ էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի թղթային կրկնօրինակների տրամադրում,
6. բանկային հիմնարկներում հաշվարկների մասնակիցներին ըստ հաշիվների ձևակերպումների իրականացում,
7. հաշվարկներից քաղվածքների տրամադրում (թղթային կրիչների կամ էլեկտրոնային տեսքով):

Գրամարկդային ծառայությունները՝ դրանք այն են, որոնք կապված են կանխիկ դրամի վճարման և նրա գանձման (ինկասսացիայի) հետ: Խոսելով հաշվարկա-դրամարկդային սպասարկման մասին՝ անհրաժեշտ է տարբերակել բյուջետային միջոցների հաշիվների մարում, այդ աղբյուրների հաշվին հաշվարկների իրականացում և բյուջետային կազմակերպությունների կողմից ինքնուրույն ստացված եկամուտների հաշիվների մարում:

1.4. Բյուջետային միջոցների հաշիվների հաշվառում

Բյուջետային կազմակերպությունները, որոնք հիմնականում ֆինանսավորվում են պետական բյուջեի հաշվին, ներկայումս այդ գործընթացը փոխադրվել է կենտրոնական գանձապետական սպա-

սարկման ոլորտ, որոնց միջոցով նրանք ստանում են վերը նշված հաշվարկային ծառայությունները: Բյուջետային կազմակերպություններն իրավունք չունեն առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հետ ինքնուրույն կնքել պայմանագիր բյուջետային ֆինանսավորման հաշիվների բացման համար: Արդյունքում նշված ֆինանսավարող միջոցները կարող են հաշվեգրվել կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվի վրա, և որի հետ էլ անմիջականորեն կարող են աշխատել առևտրային բանկերը:

Ֆինանսավորման գործընթացը կարգավորելու համար բյուջետային կազմակերպությունները վճարման փաստաթղթերը ներկայացնում են ՀՀ կենտրոնական գանձապետարան, որոնք տեղում ստուգումից հետո հանձնվում են առևտրային բանկերին (հիմնականում ՀՀ Կենտրոնական բանկ) կատարման համար: Հետևաբար, հաշվարկային փաստաթղթերի ընդունումը բանկ իրականացվում է կենտրոնական գանձապետարանից, նա էլ ստանում է բանկից հաշվարկային փաստաթղթերի մշակման ընդունման հաստատումները:

Այլ է գործը դրամարկղային սպասարկուման ոլորտում: Բյուջետային կազմակերպությունները կանխիկ գումար ստանում են անմիջականորեն առևտրային բանկում, կենտրոնական գանձապետարանի կողմից տրված չեկային գրքույկներով կառույցների: Միաժամանակ բյուջետային կազմակերպությունների կողմից չօգտագործված պետական բյուջեի կամ արտաբյուջետային միջոցները ետ են վերադարձվում բանկի դրամարկղ: Դրամարկղում պահվող գումարի սահմանաչափի (լիմիթի) վերաբերյալ բանկը տեղյակ է պահում կենտրոնական գանձապետարանի կառույցին, հաշվի առած բոլոր բյուջետային կազմակերպությունների դրամարկղում պահվող սահմանաչափերը, որոնք սպասարկվում են կենտրոնական գանձապետարանի տվյալ կառույցում:

Բանկը չի վերահսկում բյուջետային կազմակերպությունների դրամարկղի լիմիտի պահպանման վրա, որոնք սպասարկվում են

գանձապետական համակարգում: Բյուջետային միջոցների բաշխման դրամարկղային գործառնությունների վարման կարգը, հսկում են իրենք՝ գանձապետական մարմինները:

Գոյություն ունի հաշվարկային փաստաթղթերի ընդունման յուրահատկություններ: Այսպես, եթե յուրաքանչյուր ոչ բյուջետային կազմակերպություն կարող է օգտագործել իր միջոցները, ինչպես տարվա վերջում, այնպես էլ հենց նրա սկզբում, ապա բյուջետային միջոցների ծախսման աղյուսակի ազատությունն անընդունելի է և տարվա վերջում բոլոր հաշվարկները պետք է ավարտվեն:

1.5. Ինքնուրույն աշխատած եկամուտների հաշիվների հաշվառում

Բյուջետային կազմակերպությունների ինքնուրույն աշխատած եկամուտները, մինչև վերջերս հաշվառվում էին բանկերում այդ կազմակերպությունների սեփական հաշիվներում: Սակայն 1990-ական թվականների վերջում սկսվեց այդ միջոցների փոխանցումը գանձապետական հաշիվներին:

Ինչպես նշվեց վերևում, բյուջետային կազմակերպություններն ունեն նշանակելի սահմանափակ ինքնուրույնություն, քան այլ տնտեսավարող սուբյեկտներ: Բյուջետային միջոցների տեղաբաշխումը բանկային դեպոզիտներում, դրա հաշվին լրացուցիչ եկամուտների ստացումը և ստացված եկամուտների փոխանցումը հավատարմագրային կառավարման չի թույլատրում, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Օրենսդրությամբ բյուջետային կազմակերպություններին արգելվում է բանկերից ստանալ վարկեր: Առայժմ գործնականում ՀՀ-ում բյուջետային կազմակերպություններին ֆակտորինգային ծառայությունների մատուցման դեպքեր չեն արձանագրվում:

ՀՀ հարկային օրենսդրությանը հանաձայն, բոլոր այն բյուջետային կազմակերպությունները, որոնք իրենց գործունեության ընթացքում ստանում են շահույթ, ապա պարտադիր ընդգրկվում են շահութահարկ վճարողների շրջանակներում: Տվյալ պարագայում բյուջետային կազմակերպությունները պարտավոր են վճարել շահութահարկ, այն գումարներից, որոնք արդյունք են դրանց յուրաքանչյուր գործունեության հետ կապված նպատակային մուտքերի և կատարված ծախսումների, երբ ստացված եկամուտները գերազանցում են ծախսումներին:

Եթե բյուջետային կազմակերպությունները զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ, ապա հարկման ենթակա է այն շահույթը, որը ստացվում է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացված հասույթի և գույքային իրավունքներին համապատասխան նրանց ծախսերի տարբերությունից:

Հարկային օրենսդրությանը համապատասխան ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) վճարողներ համարվում են առևտրային կազմակերպությունները և անհատական ձեռնարկատերերը: ԱԱՀ գծով բյուջետային կազմակերպությունների համար բացառություններ չեն նախատեսվում: Բյուջետային կազմակերպությունները, որոնք իրականացնում են ԱԱՀ հարկվող գործառնություններ, քաղաքացիաօրենսդրական պայմանագրերի հիման վրա նրանք պարտավոր են հաշվարկել ԱԱՀ-ով համապատասխան գումարը և վճարել պետական բյուջե:

Բացի ապրանքների (աշխատանքների և ծառայությունների) իրացումից, ԱԱՀ-ով հարկվում են նաև դրամական միջոցները, որոնք ստանում են կազմակերպությունները կապված վճարային հաշվարկների հետ, ինչպես նաև պայմանագրային խախտումների հետևանքով ստացված տուժերը և տուգանքները:

Եթե բյուջետային կազմակերպություններն իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն և ի հաշիվ ծառայությունների

մատուցման ստանում են գումարներ, ապա այդ դրամական միջոցները նույնպես հանդիսանում են ԱԱՀ հարկման օբյեկտ:

Դրա հետ մեկտեղ վճարովի ծառայությունները, որոնք մատուցում են բյուջետային համակարգի կազմակերպությունները, (որոնցում ընդգրկված են հիմնական ՀՀ սոցիալական նշանակության ճյուղերը) օրենսդրությամբ սահմանված կարգով տրվում են ամենամեծ բարենպաստ արտոնություններ:

Վերլուծելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ԱԱՀ-ից ազատված գործարքների ցանկը, կարելի է գալ այն հետևության, որ զեղչային հարկման կարգավիճակը ընդգրկում է զգալի քանակությամբ վճարովի ծառայություններ, որոնք մատուցում են բյուջետային կազմակերպությունները, մասնավորապես՝ կրթության, գիտության, առողջապահության, սանիտարա-առողջարանային և սոցիալական ոլորտում, մշակույթի, կինոարտադրության, արխիվային, պետության կողմից մշակույթի ու արվեստի գծով պահպանվող արժեքների վերանորոգման և պահպանման գործում: Հարկային օրենսդրությունը սահմանել է պետական և համայնքային ունեցվածքի վարձակալության համար ԱԱՀ-ի հաշվարկման հատուկ կարգ: Այդ ծառայությունների մատուցման դեպքում ԱԱՀ-ի վճարողներ են հանդիսանում վարձակալները՝ հարկային գործակալները և, որպես կանոն, հարկման օբյեկտ է հանդիսանում վարձավճարի գումարը, այդ թվում՝ ԱԱՀ: Հարկումը իրականացվում է հարկային դրույքաչափով հաշվարկի միջոցով: Հարկի գումարը, որը ենթակա է վճարման բյուջե, որոշվում ու վճարվում է ամբողջ ծավալով հարկային գործակալների միջոցների հաշվին և հարկային ժամանակաշրջանի արդյունքներով ենթակա է վճարման վարձակալության պայմանագրի համաձայն:

Բյուջետային կազմակերպությունների փոխհարաբերությունները հանրապետական մակարդակով ձևավորված արտաբյուջետային միջոցների հետ, արտահայտվում է հետևյալ առանձնահատկություններով:

1. **Փոխհարաբերություններ կենսաթոշակային հիմնադրամի հետ:** Այն ապահովագրական անդամավճարներն են, որոնք հավաքագրվում են որպես կենսաթոշակային հիմնադրամ, աշխատանքային կենսաթոշակի կուտակային մասի վճարման համար: Այս անդամավճարներից ազատված են ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը և գործադիր իշխանության այլ հանրապետական կառույցները:
2. **Փոխհարաբերություններ սոցիալական ապահովագրության հիմնադրամի հետ:** Ըստ որի ապահովագրողները պարտադիր սոցիալական ապահովագրության միջոցների հաշվին վճարում են թոշակառուների առողջարանային բուժման ուղեգրերի միջին արժեքի որոշակի մասը:

***1.6. Բյուջետային կազմակերպությունների
փոխհարաբերությունները պետական վերահսկող մարմինների
հետ***

Բյուջետային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը գտնվում է պետության հատուկ հսկողության ներքո: Ուստի այդ առումով էլ հանրապետական մակարդակով ստեղծվել է ՀՀ վերահսկիչ պալատը: Առանձին համայնքների մակարդակով նույնպես գոյություն ունի հատուկ ծառայություն, որն իրականացնում է հսկողություն համայնքային միջոցների օգտագործման գծով: Օրենքի համաձայն ՀՀ վերահսկիչ պալատը հանդիսանում է պետական ֆինանսական վերահսկողության մշտական գործող մարմինը, որը ստեղծվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից և հաշվետու է նրան: Վերահսկիչ պալատի հսկողական լիազորությունները տարածվում են տեղական ինքնակառավարման մարմինների, բաժնետիրական

ընկերությունների, կազմակերպությունների, առևտրային բանկերի ապահովագրական ընկերությունների և այլ ֆինանսական կազմակերպությունների հիմնարկների, նրանց միությունների և այլ կառույցների վրա անկախ սեփականության տեսակներից և ձևերից, եթե նրանք ստանում, փոխանցում, օգտագործում են պետական բյուջեի միջոցներ կամ օգտագործում են պետական սեփականությունը կամ ղեկավարում են այն, ինչպես նաև ունեն համապատասխան օրենքներով կամ պետական իշխանության մարմինների կողմից հարկային, մաքսային և այլ արտոնություններ ու առավելություններ:

Այսպիսով, ՀՀ վերահսկիչ պալատի հսկողությունը չի տարածվում բոլոր տնտեսավարող սուբյեկտների վրա: Իրավաբանական անձանց մեծ մասը ոչ մի հարաբերություն չունի պետական բյուջեի կամ հանրապետական արտաբյուջետային հիմնադրամների հետ և հետևաբար դուրս է մնում վերահսկիչ պալատի հսկողության շրջանակներից: Նույնը չի կարելի ասել բյուջետային կազմակերպությունների մասին, որոնք ֆինասավորվում են պետական բյուջեից և որոնց վրա էլ ամբողջ ծավալով տարածվում է այդ հսկողությունն ու ընդգրկում է նրանց գործունեության որոշ կողմերը:

Բյուջետային կազմակերպությունները պարտավոր են ներկայացնել վերահսկիչ պալատին այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է ապահովել նրա գործառույթները: Վերահսկողական և վերստուգիչ աշխատանքներ կատարելիս վերահսկիչ պալատը ստանում է ստուգվող կազմակերպություններից ամբողջ անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը այն հարցի մասին, որը մտնում է նրանց իրավասությունների մեջ: Վերահսկիչ պալատի պահանջներից ելնելով բյուջետային կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից, անհրաժեշտ փաստաթղթերի ժամանակին, ինչպես նաև կեղծ տեղեկատվության տրամադրումը առաջացնում են օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

Վերահսկիչ պալատի տեսուչներն ունեն մի շարք իրավասություններ և իրենց ծառայողական խնդիրների լուծման ժամանակ իրավունք ունեն՝

- անարգել հաճախել բյուջետային կազմակերպություններ, այդ թվում զինվորական գործասեր և ստորաբաժանումներ,
- մտնել ցանկացած արտադրական, պահեստային, առևտրական և գրասենյակային շինություններ, եթե ՀՀ օրենքով այլ բան նախատեված չէ,
- դրամարկղային և ծառայողական շինությունների, դռների, ինչպես նաև պահեստների և արխիվների, գմռում (կնքում) իսկ եթե հայտնաբերվում են չարաշահումներ և հափշտակումներ, ապա անհրաժեշտ է առգրավել համապատասխան փաստաթղթերը, թողնելով գործերի մեջ առգրավման ակտը, պատճեն կամ փաստաթղթերի ցանկը:

Ազդեցության միջոցներին վերաբերում են՝

- ստուգման միջոցառումների արդյունքում վերահսկիչ պալատը ուղղարկում է պետական իշխանության մարմիններին, ստուգվող բյուջետային կազմակերպությունների ղեկավարներին, հանձնարարելով կազմակերպել և ձեռնարկել միջոցներ հայտնաբերված խախտումները վերացնելու, իսկ պետությանը հասցված վնասը վերականգնելու և պաշտոնատար անձանց, օրենքի խախտման մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար:

Այդ փաստաթուղթը պետք է քննարկվի նշված ժամկետում, իսկ եթե ժամկետը նշված չէ, ապա այն ստանալու օրվանից 20 օրվա ընթացքում:

Պետական գումարների կամ նյութական միջոցների հափշտակում, ինչպես նաև այլ չարաշահումներ հայտնաբերելու դեպքում վերահսկիչ պալատը ստուգման նյութերն անհապաղ ուղարկում է իրավապահ մարմիններին:

ԳԼՈՒԽ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

2.1. ՀՀ Բյուջետային համակարգի միջոցները

Բյուջետային կազմակերպությունների միջոցների կազմավորման ամենահիմնական աղբյուրը բյուջետային ֆինանսավորումն է, որը հիմնված է որոշակի սկզբունքների վրա, և բնութագրվում է տրամադրման առանձնահատուկ ձևերով ու մեթոդներով:

Բյուջետային ֆինանսավորման սկզբունքներում կարևոր դեր են խաղում բյուջետային կազմակերպությունների ֆինանսավորման համակարգի ռացիոնալ կազմակերպումը: Դրանց վերաբերվում են՝

1. առավելագույն արդյունքի ստացումը, նվազագույն ծախսերի պայմաններում: Բյուջետային միջոցները պետք է հատկացվեն միայն այն պայմանով, որ ապահովեն դրանց օգտագործման ամենամեծ արդյունավետությունը: Այդ արդյունքը կարող է արտահայտվել, մի կողմից, երկրի զարգացման համար տարբեր սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, իսկ մյուս կողմից՝ դրամական միջոցների հետադարձ հոսքով պետական բյուջե ի հաշիվ բյուջետային հատկացումներ ստացողների եկամուտների աճի:
2. Բյուջետային հատկացումների օգտագործման նպատակային բնույթը: Բյուջետային միջոցներից ստացողներին գումարներ փոխանցվում են միայն հաստատված բյուջեից, ընդ որում նախօրոք նախատեսված նպատակների համար: Այս սկզբունքի խիստ պահպանումը նպաստում է բյուջետային հատկացումների անարդյունավետ օգտագործմանը:
3. Բյուջետային միջոցները տրամադրվում են արտադրական և այլ ցուցանիշների կատարմանը համընթաց և հաշվի առնելով նախկինում տրված հատկացումները: Բյուջետային ֆինանսավորման

կախվածությունը ցուցանիշների կատարումից թույլ է տալիս ֆինանսական մարմիններին իրականացնել գործողություններ և արդյունավետ հսկողություն հիմնարկների, տարբեր ընկերությունների և կազմակերպությունների գործունեության վրա:

4. Բյուջետային ֆինանսավորման անվերադարձելիությունը: Միջոցների հատկացում առանց դրանց պարտադիր պետական բյուջե վերդարձման պայմանի.
5. Բյուջետային ֆինանսավորման անհատուցելիությունը: Բյուջետային միջոցների հատկացում առանց պետությանը վճարելու որևէ եկամուտ տոկոսների կամ այլ հատկացումների տեսքով:

Պրակտիկայում բյուջետային հատկացումները օգտագործվում են բյուջետային ֆինանսավորման 2 եղանակով՝

- ֆինանսավորում «Նետտո-բյուջե» համակարգով: Այս եղանակով դրամական միջոցների տրամադրումը բնութագրվում է նրանով, որ բյուջետային ֆինանսավորումը հատկացվում է հաստատված բյուջեով և նախատեսված սահմանափակ թվով ծախսերի կատարման,
- ֆինանսավորում «Բրուտո-բյուջե» համակարգով: Օգտագործվում է այն հիմնարկ-կազմակերպությունների համար, որոնց գործունեությունն ամբողջովին իրականացվում են բյուջետային ֆինանսավորման միջոցով: Այս դեպքում բյուջետային միջոցները տրամադրվում են բոլոր տեսակի ծախսերի համար, որոնք կապված են, ինչպես ընթացիկ ապահովման, այնպես էլ բյուջետային կազմակերպությունների գործունեության ընդլայնման հետ:

Բյուջետային միջոցների տրամադրման վերը նշված եղանակները իրականացվում են ֆինանսավորման հետևյալ ձևերի օգնությամբ՝

1. հատկացումներ բյուջետային կազմակերպությունների պահպանման համար,

2. հատկացումներ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների վճարման համար, որոնք կատարվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից՝ պետական և համայնքային գործընթացներին համահունչ,
3. տրանսֆերտների տրամադրում բնակչությանը,
4. սուբվենցիաներ և սուբսիդիաներ ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Բյուջետային ֆինանսավորման կարևորագույն տարր է հանդիսանում բյուջեից միջոցների հատկացման մեթոդները, որոնց միջոցով ֆինանսական մարմինները ապահովում են դրամական միջոցներով իրականացնում են բյուջեով նախատեսված միջոցառումներ, կատարում են միջոցների վերաբաշխում այլ արդյունքների հասնելու նպատակով և կարգավորում են ֆինանսական ռեսուրսների նպատակային օգտագործումը:

2.2. Բյուջետային կազմակերպությունների սեփական միջոցները

Բյուջետային կազմակերպության սեփական ֆինանսական միջոցները ձևավորվում են տարբեր աղբյուրներից՝

1. միջոցներ, որոնք ստացվում են շենքերը, շինությունները և սարքավորումները վարձակալական հիմունքներով հանձնելուց հետո,
2. միջոցների ստացում ձեռնարկատիրական և այլ եկամուտ բերող գործունեությունից,
3. ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից տրամադրվող նպատակային միջոցներից,
4. այլ մուտքերից:

Բոլոր դրամական մուտքագրումները ունեն մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել բյուջետային կազմակերպությունների մաս-

նագիտական և տնտեսական գործունեությունը: Հավաքագրված բոլոր միջոցները պետք է օգտագործվեն բյուջետային դասակարգմամբ նախատեսված ծախսերի տեսակների և ուղղությունների: Բյուջետային դասակարգմամբ վերը թվարկված եկամուտներն անվանվում են համապատասխան բյուջեի ոչ հարկային եկամուտներ:

Նշված միջոցները, մինչև բյուջետային կազմակերպությունների տրամադրության տակ անցնելը նախօրոք, հաշվեգրվում են բյուջետային հաշվին և միայն դրանից հետո տվյալ կազմակերպության համապատասխան հաշվին:

Արտաբյուջետային միջոցների ներգրավման գործընթացների իրականացումը, պլանավորումը, ծախսումը և դրանց արդյունավետության բարձրացումը հնարավոր չէ առանց ֆինանսական հոսքերի դասակարգման:

Դասակարգումը նպաստում է՝

1. արտաբյուջետային աղբյուրների հաշվին լրացուցիչ եկամուտների ներգրավման հարցերի լուծման համալիր մոտեցման իրականացում,
2. պլանավորման, կառավարման, հաշվապահական հաշվառման գործընթացների նույնականացում և հիմնավորում,
3. արտաբյուջետային միջոցների պլանավորման և օգտագործման արդյունավետության բարձրացում,
4. բազմաթիվ ֆինանսավորման պայմաններում ստեղծել ֆինանսական հոսքերի ղեկավարման և բաշխման արդյունավետ մեխանիզմներ:

Սեփական եկամուտների դասակարգման հիմքում միաժամանակ ընկած են երկու սկզբունքներ՝

- բյուջետային կազմակերպությունների գործունեության տեսակները,
- միջոցների ստացման տեսակները:

Սեփական եկամուտների ստացման տեսակներով այս սկզբունքը դրված է միջոցների հաշվառման անձնական հաշիվների բացման թույլտվության մեջ, որոնք արդյունք են ձեռնարկատիրական և այլ եկամուտ բերող գործունեությունից:

Այսպիսով, եկամուտների դասակարգումն ըստ մուտքագրման տեսակների պետք է ամբողջովին համընկնի, այդ եկամուտների ստացման տեսակների ցանկին, որոնք արտացոլված են անձնական հաշիվների բացման թույլտվության մեջ:

Միաժամանակ, եթե ձեռնարկատիրական և այլ եկամուտ բերող գործունեությունից ստացված արտաբյուջետային գումարները, որոնք նախատեսված չեն անձնական հաշիվների բացման թույլտվությամբ, ապա հաշվարկվում են ընդհանուր եկամուտների մեջ և բաշխվում տնտեսական դասակարգման ծածկագրերին (կոդերին) համապատասխան: Սակայն այդ գումարների օգտագործումը հնարավոր է դառնում միայն համապատասխան թույլտվության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո:

Բյուջետային կազմակերպությունների եկամուտները կարելի է խմբավորել այնպես, ինչպես այն նախատեսված է կենտրոնական գանձապետարանի մարմիններում ձեռնարկատիրական և այլ եկամուտ բերող գործունեությունից ստացված միջոցների հաշվառման անձնական հաշիվներ բացելու համար: Եկամուտների թվին են դասվում՝

1. միջոցներ, որոնք ստացվել են բյուջետային կազմակերպությունների վճարովի գործունեությունից, իր գործունեության ոլորտին համապատասխան,
2. միջոցներ, որոնք ստացվել են արհեստանոցների արտադրական գործունեությունից, փորձարարական տեղամասերից, տպարաններից, խանութներից, հասարակական սննդի օբյեկտներից, ինչպես նաև բյուջետային կազմակերպությունների այլ ենթա-

կառուցվածքներից, որոնք չունեն իրավաբանական անձի կարգավիճակ,

3. միջոցներ, որոնք ստացվել են տնտեսական պայմանագրերին համաձայն վճարովի ծառայությունների մատուցումից,
4. միջոցներ, որոնք ստացվել են ձեռնարկատիրական գործունեությունից, ապրանքների առք ու վաճառքից, միջնորդական ծառայություններից, այլ կազմակերպությունների փայատիրական մասնակցությունից, բաժնետոմսերի ձեռք բերումից, փոխառություններից, այլ արժեթղթերից (շահաբաժիններ, տոկոսներ դեպոզիտային հաշիվների ու ավանդների դիմաց),
5. միջոցներ, որոնք ստացվել են հանրակացարաններում ապրողների վճարներից, այդ թվում՝ հյուրանոցային տիպի, նախադրարոցական հիմնարկներում և գիշերօթիկ դպրոցներում երեխաների պահպանման վճարներից,
6. միջոցներ գիտահետազոտական, փորձարարական և կոնստրուկտորական աշխատանքներից,
7. միջոցներ կապի ծառայությունից:

Բացի վերը թվարկված եկամուտներից, բյուջետային կազմակերպություններում ստացվում են նպատակային գումարներ պետական բյուջեից, նախարարություններից ու գերատեսչություններից, արտաբյուջետային պետական հիմնադրամներից, պետական ունեցվածքի վաճառքից և նմանատիպ այլ աղբյուրներից:

Արտաբյուջետային եկամուտների դասակարգումը բյուջետային հիմնարկներին հիմք է տալիս կառավարելու ֆինանսական ամբողջ գործունեությունը (այդ թվում՝ արտաբյուջետային), որոշելու մեթոդական սկզբունքները, ուղղվածությունը և պլանավորման գործընթացների փուլերը, ներգրավելու և օգտագործելու արտաբյուջետային ֆինանսական ռեսուրսները:

ԳԼՈՒԽ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ԴԻՐԱՆՑ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

3.1. Բյուջետային կազմակերպությունների ծախսերի դասակարգումը

Բյուջետային կազմակերպությունների եկամուտներն ու ծախսերը հաշվառելու և պլանավորելու համար դրանք դասակարգվում են երկրի միասնական բյուջետային համակարգի շրջանակներում: Բյուջետային դասակարգումն իրենից ներկայացնում է միատեսակ հատկանիշներով և սահմանված կարգով տեղաբաշխված ու կողավորված բյուջետային եկամուտների և ծախսերի խմբավորումը:

Բյուջետային կազմակերպությունների եկամուտների և ծախսերի խմբավորումը և դրանց ձևավորման սկզբունքները պայմանավորված են սոցիալ-տնտեսական էությանը, տնտեսության կառավարման համակարգով և կառուցվածքով: Բյուջետային դասակարգման հիմքում ընկած է ցուցանիշների այնպիսի համախումբ, որը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու սոցիալ-տնտեսական պայմաններին համահունչ կատարվող ծախսերի ուղղվածության վերաբերյալ՝ գերատեսչական և տարածքային կտրվածքներով, նրանց կազմում և կառուցվածքում: Բյուջետային դասակարգման կարևորագույն պահանջներից մեկը, դա խմբավորման պարզությունն ու հստակությունն է:

Բյուջետային դասակարգման կարևորությունը կայանում է նրանում, որ այստեղ խելամիտ են օգտագործվում, խմբավորված բյուջետային դասակարգման տարրերով պայմանավորված տվյալները, ինչը թույլ է տալիս տեսնելու բյուջետային ռեսուրսների իրական շարժը և ակտիվ ազդելու տնտեսական ու սոցիալական գործընթացների վրա: Համադրելով պլանային և հաշվետվական տվյալները և վերլուծելով համապատասխան ցուցանիշները, հնարավորություն է

ընձեռում կատարելու հիմնավորված եզրակացություններ և առաջարկություններ բյուջետային հիմնադրամների ձևավորման ու օգտագործման վերաբերյալ, և դրանց համահունչ էլ կենտրոնացնելու հիմնական դրամական ռեսուրսները տնտեսական ու սոցիալական կարգացման ուղղություններով:

Բյուջետային դասակարգումը միաժամանակ ստեղծում է նախապայմաններ նախահաշիվների և բյուջեների միավորմանը ընդհանուր հավաքի մեջ, հստակեցնում է դրանց դիտարկումն ու տնտեսագիտական վերլուծությունը, պարզեցնում է բյուջեի օգտագործման հսկողությունը, նպաստում է ժամանակին միջոցների հավաքագրումը և դրանց նպատակային օգտագործմանը: Այն հնարավորություն է տալիս բյուջեի օգտագործման հաշվետվություններում համադրել եկամուտներն ու ծախսերն իրար հետ, որը նպաստում է ֆինանսական կարգապահության պահպանմանը, միջոցների տնտեսմանը և ֆինանսական պլանների կատարման հսկողությանը:

Բյուջետային համակարգի բոլոր օղակների ինքնուրունության պայմաններում դասակարգումը հնարավորություն է տալիս միասնական մեթոդական մոտեցում կիրառել բյուջեների կազմման և օգտագործման, բյուջետային ցուցանիշների ճյուղային և տարածքային կտրվածքով համեմատելու համար:

Բյուջետային դասակարգումը պարտադիր է բոլոր հիմնարկ, ձեռնարկությունների համար և կառուցվում է բյուջետային օրենդության պահանջների համապատասխան:

Նոր դասակարգման կարևորագույն նախապայմանը կայանում է նրա պարզության, դիտարկվելիության մեջ և ավելի ցայտուն արտացոլելու բյուջեի եկամուտների աղբյուրներն ու միջոցների ծախսման ուղղությունները: Անհրաժեշտ է իրականացնել դասակարգման մանրակրկիտ վերծանում, հատկապես միջոցների ծախսման մասում: Նոր դասակարգման կարևոր խնդիրը եղել է ապահովել բյուջեի

եկամուտների և ծախսային մասերի, կազմի և կառուցվածքի միջազգային համեմատելիությունը, նրանց իրական բովանդակությունը:

3.2. Բյուջետային կազմակերպությունների հիմնական ծախսերը

Բյուջետային կազմակերպություններն իրենց վրա դրված գործառնությունների կատարման համար ծախսում են հատկացված բյուջետային միջոցները և ստացված արտաբյուջետային գումարները, համաձայն մշակված նախահաշիվների, որոնք իրենց հերթին, կազմված են գործող բյուջետային դասակարգմանը համապատասխան:

Բյուջետային դասակարգման համաձայն բյուջետային կազմակերպությունների ծախսերը բաժանվում են ***ընթացիկ և կապիտալ ծախսերի***:

Ա. Ընթացիկ ծախսերը նախատեսվում են աշխատավարձի վճարման, ապրանքների ձեռք բերման, ծառայությունների մատուցման, արտադրական աշխատանքների կատարման և այլ նպատակների համար: Նյութական արժեքների ձեռքբերման և մատուցված ծառայությունների կատարման համար ծախսերն օգտագործվում են տարվա ընթացքում:

Այս խմբի մեջ մտնում են ծախսային հետևյալ հոդվածները՝

- աշխատավարձերի վճարումն ըստ կնքված աշխատանքային պայմանագրերի և իրավական ակտերի, և աշխատավարձի կարգավորվող չափը աշխատակիցների տարակարգերին համապատասխան,
- աշխատանքի վարձատրության ավելացում սոցիալական ապահովագրության հատկացումներով համահունչ,
- բնակչությանը տրանսֆերտներ,
- աշխատակիցներին գործուղման և այլ փոխհատուցվող վճարներ,

- պետական կամ համայնքային պայմանագրերով նախատեսված ապրանքների գնում, ծառայությունների ու աշխատանքների դիմաց վճարներ,
- ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց վճարներ հաստատված նախահաշիվների համապատասխան, առանց կնքված պետական կամ համայնքային պայմանագրերի,
- սուբվենցիաներ համայնքային բյուջեներին կամ իրավաբանական անձանց,
- սուբսիդիաներ համայնքային բյուջեներին, ֆիզիկական և իրավաբանական անձանց,
- պարտքային պարտավորությունների սպասարկում:

Բ. Կապիտալ ծախսեր: Նշված խմբում արտացոլվում են բյուջետային միջոցներ ուղղված հիմնական միջոցների մեջ կապիտալ ներդրումներին, պետական պահուստների ստեղծմանը, հողերի ձեռք բերմանը, ոչ նյութական և այլ ակտիվների ու կապիտալ տրանսֆերտների ձևավորմանը:

1. Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում

Այս ենթախմբին վերաբերվում են ծախսերն ուղղված արտադրական, ոչ արտադրական նշանակության օբյեկտների և բնակելի շինարարությանը, ինչպես նաև սարքավորումների ձեռք բերմանը, որոնք չեն ներառվում շինությունների նախահաշիվների մեջ:

Կապիտալ ծախսեր սարքավորումների և երկարաժամկետ օգտագործման առարկաների ձեռք բերման համար, որոնք նախատեսված են հիմնարկների և կազմակերպությունների պահպանման ծախսերում:

2. Կապիտալ շինարարություն

Սույն հոդվածին վերաբերվում են այն ծախսերը, որոնք նախատեսված են պետական և համայնքային պայմանագրերով. շինմոնտաժային աշխատանքների կատարման, սարքավորումների, մոն-

տաժի աշխատանքների գործիքների և գույքի ձեռք բերման, այլ կապիտալ աշխատանքների ու ծախսերի իրականացման համար, այդ թվում՝

- կառուցում, ընդլայնում, գործող շենքերի և շինությունների վերակառուցում ու դրաց հետ կապված աշխատանքներ,
- տեղամասի իրացում, նախապատրաստում և դրանց հետ կապված շենքերի քանդում և շինարարության տարածքի հարթեցում,
- սարքավորումների ձեռք բերում և նրանց տեղափոխումը պահեստ կամ մոնտաժի վայր,
- տեխնոլոգիական, էներգետիկ, բարձման ու բեռնաթափման, և այլ սարքավորումների մշտական շահագործման վայրում հավաքման ու տեղակայման աշխատանքներ,
- կոնստրուկցիաների և սարքավորումների մոնտաժի ու տեղակայման աշխատանքներ,

Ինչպես նաև այլ կապիտալ աշխատանքներ և ծախսեր, որոնց կազմի մեջ ներառվում են նախագծային և հետախուզական աշխատանքներ:

3. Կապիտալ վերանորոգում

Սույն հոդվածին են վերաբերվում կապիտալ պայմանագրերով կատարված ծախսերը բնակելի ֆոնդի կապիտալ վերանորոգման արտադրական և ոչ արտադրական նշանակության օբյեկտների, զինվորական կառույցների կապիտալ վերանորոգման և այլ կապիտալ վերանորոգման աշխատանքները փոխում և վերականգնում շենքերի, շինությունների մշակման կոնստրուկցիաների վերկանգնում:

4. Պետական պաշարների և պահուստների ստեղծում

Հոդվածների այս ենթախմբին են վերաբերվում ծախսերը, որոնք օգտագործվում են պետական պաշարների ստեղծման, բարե-

լավման և բոլոր տեսակի պետական պահուստների լրացման համար:

5. Հողերի, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների ձեռք բերում

Այս ենթախմբին են վերաբերվում այն ծախսերը, որոնք նպատակատուղվում են հողակտորները որպես սեփականության և տարբեր ոչ նյութական ակտիվների ձեռք բերման համար:

6. Կապիտալ տրանսֆերտներ

Այս ենթախմբին վերաբերվում են այն ծախսերը, որոնք հանդես են գալիս կապիտալ տրանսֆերտների, երկրի ներսում նախատեսված տրանսֆերտների, համայնքային բյուջեներին տրանսֆերտների, հիմնարկներին և ֆինանսական կազմակերպություններին, տրանսֆերտների, երկրի ներսում երկրի ներսում այլ տրանսֆերտների և արտերկրներին կապիտալ տրանսֆերտների տեսքով:

3.3. Բյուջետային կազմակերպություններ ծախսերի պլանավորումը

Բյուջետային կազմակերպությունների ֆինանսական պլանավորումը հիմնված է տարբեր նախահաշիվների կազման վրա: Այսպես, բնեղեն ցուցանիշների (սպասարկող անձնակազմի թվաքանակը, շինությունների մակերեսները և այլն) և ֆինանսական նորմատիվների հիման վրա կազմվում են բյուջետային ծախսերի նախահաշիվներ, որոնք լինում են մի քանի տեսակի, այդ թվում՝

1. ***անհատական նախահաշիվներ***, որոնք կազմվում են առանձին բյուջետային կազմակերպության կամ առանձին միջոցառման անցկացման համար,
2. ***ընդհանուր նախահաշիվներ***, որոնք կազմվում են միատիպ կազմակերպությունների խմբի կամ միջոցառումների համար,

3. **կենտրոնացված միջոցառման ծախսերի նախահաշիվներ**, որոնք մշակվում են գերատեսչությունների կողմից միջոցառումների ֆինանսավորման համար, որոնք իրականացվում են կենտրոնացված կարգով (սարքավորումների գնում, շինարարություն, վերանորոգում և այլն),
4. **հավաք նախահաշիվներ**, որոնք միավորում են անհատական նախահաշիվները կենտրոնացված միջոցառումների համար, այսինքն դրանք նախահաշիվներ են ամբողջ գերատեսչության համար:

Բյուջետային կազմակերպության նախահաշվում արտացոլվում են՝

- կազմակերպության ռեկվիզիտները (նրա անվանումը, բյուջեն, որից կատարվում է ֆինանսավում, նախահաշիվը հաստատող անձի ստորագրությունը, կազմակերպության կնիքը և այլն),
- հավաքագրված ծախսերը (աշխատավարձի ֆոնդ, նյութական ծախսեր, արտադրական և սոցիալական զարգացման հիմնադրամ, նյութական խրախուսման հիմնադրամ և այլ հիմնադրամներ),
- հավաքագրված եկամուտները (բյուջեից ֆինանսավորվող, բնակչությանը լրացուցիչ վճարովի ծառայություններ, ծառայությունների մատուցում կազմակերպությունների հետ համաձայնեցված պայմանագրերին համաձայն և այլ մուտքեր),
- կազմակերպության արտադրական ցուցանիշները,
- եկամուտների և ծախսերի հիմնավորման հաշվարկները:

Բյուջետային կազմակերպության ծախսերի նախահաշիվի օրինակը ներկայացված է 1 և 2 հավելվածների տեսքով:

Բյուջետային կազմակերպությունների հաստատված նախահաշիվները հանդիսանում են նրանց որոշակի ժամանակահատվածի ֆինանսական պլանները:

Բյուջետային կազմակերպությունների նախահաշիվների կազմման հետ լուծվում են հետևյալ խնդիրները, այդ թվում՝

- բյուջետային կազմակերպության պետական ֆինանսավորման ապահովումը,
- նախատեսվող ծախսերի նախագծերի վերլուծության և միջոցների օգտագործման հաշվետվությունները,
- միջոցների արդյունավետ և խնայողական ծախսման հսկողությունը:

3.4. Բյուջետային ծախսերի պլանավորման մեթոդները

Բյուջետային ծախսերի պլանավորման հիմնական մեթոդներ են հանդիսանում ծրագրա-նպատակային և նորմատիվային մեթոդները:

1. Բյուջետային ծախսերի պլանավորման ծրագրա-նպատակային մեթոդի էությունը կայանում է բյուջետային միջոցների հատկացումների համալիր պլանավորման, տնտեսական և սոցիալական խնդիրների իրականացման մեջ, ըստ հաստատված նպատակային ծրագրերի: Ֆինանսական միջոցների պլանավորման այս մեթոդը նպաստում է պահպանելու միասնական մոտեցում այդ միջոցների ձևավորման և ռացիոնալ բաշխման ծրագրերով ու նախագծերով, միաժամանակ նպաստելով դրանց նպատակային օգտագործման և հսկողության բարելավմանը: Իրենց հերթին այս ամենը բարձրացնում է միջոցների իրացման արդյունավետության մակարդակը:

Վերջին տասնամյակում մեր երկրում բյուջետային պլանավորման և ֆինանսավորման այս մեթոդը անընդհատ կատարելագործվում է, որին նպաստում են մեծ թվով հանրապետական և տարածքային կտրվածքով տնտեսական, սոցիալական, էկոլոգիական ու այլ

ծրագրերի մշակումը և իրականացումը: Հեռանկարային առումով այս մեթոդը պետք է գտնի էլ ավելի լայն կիրառում:

Միջոցառումների և նախագծերի իրականացման ծավալը որոշվում է պլանավորման և ֆինանսավորման նախահաշվային կարգով: Բյուջետային կազմակերպությունների ծախսերի նախահաշիվների կազմման հիմքում ընկած է ծավալային ցուցանիշները (մահճակալների և սովորողների, խմբերի ու դասարանների թվաքանակը և այլն), կազմակերպությունների գործունեության ժամանակը և ֆինանսական նորմատիվները: Բնակչության սոցիալական պաշտպանության միջոցառումների (կենսաթոշակներ, նպաստներ և այլն) պլանավորման ժամանակ հաշվի են առնվում այդ միջոցները ստացողների թվաքանակը և վճարումների սահմանված նորմերը:

2. Բյուջետային կազմակերպությունների նախահաշիվների կազմումը, բյուջետային միջոցառումների ֆինանսավորման պլանավորումը, հիմնականում հիմնված է ***ծախսերի և վճարումների պլանավորման նորմատիվային մեթոդի*** վրա: Նորմաները սահմանվում են օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով: Այդպիսի նորմաներ են հանդիսանում սոցիալական պահանջ-մունքների բավարարման բնեղեն ցուցանիշները դրամական արտահայտությամբ (օրինակ, բյուջետային կազմակերպություններում բնակչության սննդի ծախսերի նորմաները, նրանց բուժանյութերով, փափուկ գույքով ապահովումը, և այլն), կամ վճարների անհատական նորմաները (օրինակ, աշխատավարձի դրույքաչափերը, նպաստները, կրթաթոշակները և այլն), կամ էլ նորմաներ որոնց հիմքում ընկած են մի քանի տարիների ծախսերի միջին վիճակագրական մեծությունները, ինչպես նաև կոնկրետ ժամանակի առումով նյութական և ֆինանսական հնարավորությունները (օրինակ շինությունների պահպանման նորմաները, ուսումնական ծախսերը և այլն):

Նորմաները կարող են լինել *պարտադիր* (սահմանված կառավարության կամ տարածքային կառավարման մարմինների կողմից) կամ *ֆակուլտատիվ* (սահմանված գերատեսչությունների կողմից):

Բյուջետային ծախսերի նորմաները կարող են լինել *հասարակ* (առանձին ծախսատեսակների համար) և *խոշորացված* (ծախսերի համակցության կամ ամբողջ կազմակերպության համար):

Սահմանված են նորմատիվների հետևյալ չափերը՝

1. բնակարանային-կոմունալ տնտեսության ծառայությունների նորմատիվներ մեկ բնակչի հաշվով ամսվա կտրվածով բնեղեն արտահայտությամբ,
2. բնակելի ֆոնդի ընթացիկ և կապիտալ վերանորոգման ծախսեր, որոնք սահմանված են տոկոսներով սկզբնական կամ հաշվեկշռային արժեքից,
3. կրթության համակարգի նորմատիվները (դրամական արտահայտությամբ), որոնք սահմանվում են տարվա հաշվով մեկ անձի (աշակերտների, ուսանողների) համար, ըստ հանրակրթական հիմնարկների տեսակների,
4. առողջապահության համակարգի նորմատիվներ (դրամական արտահայտությամբ): Սահմանվում են տարվա հաշվով ընթացիկ պահպանման համար (հիվանդանոցի մեկ մահճակալի, մեկ ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկի, մեկ բնակելի տարածքի, շտապ օգնության մատուցելու և այլն),
5. բնակչության սոցիալական պաշտպանության նորմատիվներ (դրամական արտահայտությամբ): Սահմանվում են տարվա հաշվով տուն-ինտերնատներում՝ մեկ մահճակալի կամ մեկ բնակչի ընթացիկ պահպանման համար,
6. մշակույթի համակարգի նորմատիվներ (դրամական արտահայտությամբ): Սահմանվում են տարվա հաշվով՝ գրադարանների, թանգարանների, թատրոնների պահպանման համար,

7. համայնքային կառավարման մարմինների պահպանման նորմատիվներ (դրամական արտահայտությամբ): Սահմանվում են տարվա հաշվով համայնքի մեկ բնակչի համար:

Նորմատիվները սահմանվում են բյուջետային կազմակերպությունների (հիմնարկների) տեսակներով, միջոցառումներով, սպասարկող բյուջետային կազմակերպությունների տեսակներով, բյուջետային կազմակերպության գտնվելու վայրով (քաղաքային, գյուղական) և այլն:

3.5. Բյուջետային կազմակերպությունների ծախսերի առանձին տեսակների հաշվարկները

Բյուջետային կազմակերպությունների ծախսերի նախահաշիվների կազմումը հիմնված է այդ ծախսերի տարբեր հոդվածներում ներառված ցուցանիշների հաշվարկների վրա: Այդ հաշվարկների ալգորիթմները միատեսակ չեն և կախված են ծախսերի տեսակներից: Իրենց հերթին ծախսային ցուցանիշները հաշվարկվում են կա՛մ միավոր սպասարկվող բյուջետային կազմակերպությունների սպառողների ծառայությունների, կա՛մ ծախսերի նորմաների, կա՛մ էլ նախորդ տարիներին ձևավորված տվյալների հիման վրա:

Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների հաշվառման վրա, հաստիքային պաշտոնների պլանային թիվը, պաշտոնային դրույքի միջին չափը, հավելավճարները, լրավճարները և այլ գումարային վճարումներ հիմնական անձնակազմին ու արտահաստիքային աշխատողների աշխատավարձները: Հիմնական անձնակազմի աշխատավարձի ֆոնդի չափը կախված է 1-ին կարգի դրույքաչափից և կարգային գործակցից:

Աշխատավարձի ֆոնդը (ԱՖ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U\Phi = U\theta \times \overline{U\Gamma} \times \Gamma\Gamma \quad (3.5.1)$$

որտեղ,

$U\theta$ - աշխատողների թվաքանակն է,

$\overline{U\Gamma}$ - միջին կարգային գործակիցն է,

$\Gamma\Gamma$ - 1-ին կարգի դրույքաչափն է:

Գոյություն ունի աշխատավարձի ֆոնդի որոշման ճյուղային առանձնահատկություն: Օրինակ, դպրոցների ուսուցիչների աշխատավարձի ֆոնդի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$U\Phi = \overline{U} \times U\Gamma \cdot \left(0.8\Gamma_{\text{p}}^1 + 0.4\Gamma_{\text{p}}^2 \right) \quad (3.5.2)$$

որտեղ,

\overline{U} – ուսուցչի միջին ամսեկան աշխատավարձի դրույքաչափն է,

$U\Gamma$ - մեկ դասարանի մանկավարժական դրույքների քանակն է ըստ դասարանների խմբերի,

Γ_{p}^1 - դասարանների քանակն է հունվարի 1-ի դրությամբ,

Γ_{p}^2 - դասարանների քանակն է սեպտեմբերի 1-ի դրությամբ:

Ուսուցչի միջին աշխատավարձի դրույքաչափը (\overline{U}) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\overline{U} = \frac{\Phi_{\text{հ.խմբ.}} \times \overline{\Theta}_{\text{u}}}{\text{ՈՒ}_{\text{u}}} \quad (3.5.3.)$$

որտեղ,

$\Phi_{\text{հ.խմբ.}}$ - ուսուցիչների աշխատավարձի ամսեկան ֆոնդն է, դասարանների համապատասխան խմբի համար,

$\overline{\Theta}_{\text{u}}$ - ուսուցչի ծանրաբեռնվածության ամսեկան նորման է,

ՈՒ_{u} – ուսումնական պարապմունքների ընդհանուր թիվն է, դասարանների համապատասխան խմբի համար:

Առողջապահական հիմնարկներում աշխատավարձի տարեկան ֆոնդը ($U\Phi$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U\Phi = 12 \overline{U} \times \overline{\theta} \quad (3.5.4.)$$

որտեղ,

\overline{U} - աշխատավարձի միջին ամսեկան դրույքաչափն է, որը որոշվում է բժշկական խմբերի համար տարիֆատրակավորման ցուցակով. (բժիշկներ, միջին բժշկական անձնակազմ, կրտսեր անձնակազմ, վարչատնտեսական անձնակազմ),

\overline{D} - տարեկան միջին բժշկական պաշտոնների թվաքանակն է, բուժանձնակազմի խմբերով:

Դեղորայքի ձեռք բերման ծախսերը հաշվարկվում են սահմանված դրամական նորմաների հիման վրա, որոնք ձևավորվում են անցած տարվա փաստացի ծախսերի և հաշվի առած ընթացիկ տարվա փոփոխությունները, կապված դեղորայքի օգտագործման հետ:

Սննդամթերքի ծախսերը որոշվում են սահմանված նորմաներով, որոնք արտահայտվում է արժեքային և բնեղեն ձևերով: Բժշկական հիմնարկների առումով նորմաները դիֆերենցվում են ըստ բուժական բաժանմունքների կախված հիվանդությունների բնույթից:

Ընդհանրապես բժշկական հիմնարկների սննդամթերքի ծախսերի մեծությունը ($D_{սննդ}$) կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով՝

$$D_{սննդ} = \overline{U} \times P_{հիվ} \times D_{օր} \quad (3.5.5)$$

որտեղ,

\overline{U} - մահճակալների միջին տարեկան թիվն է,

$P_{հիվ}$ - հիվանդի մահճակալի վրա գտնվելու միջին օրերի թիվն է,

$D_{օր}$ – մեկ հիվանդի սննդի օրեկան միջին ծախսն է:

**ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖԻՆԱՆՍՆԵՐԸ**

***4.1. Հանրակրթական դպրոցների ծախսերի պլանավորումը և նրանց
բյուջետային ֆինանսավորումը***

Կրթության համակարգի կառավարման տնտեսագիտական մեթոդների հիման վրա ձևավորված արդյունքներն ուղղակի կախված են նրա ֆինանսական ծավալներից: Պետական պատվերի հաշվին հանրակրթական ծրագրերի կատարման նյութական հիմք է հանդիսանում ուղղակի բյուջետային ֆինանսավորումը: Բյուջետային պլանավորման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում հետևյալներին, այդ թվում՝ քաղաքական նպատակային ուղղվածությունը դրույթներ, սոցիալական և ֆինանսական ցուցանիշներին, նորմաներին և նորմատիվներին, հանրակրթական հիմնարկների աշխատանքների իրական տեխնիկատնտեսական չափանիշներին: Բյուջետային ֆինանսավորման ծավալների հաշվարկն իրականացնելու ժամանակ, հիմք է ընդունվում կրթության ծախսերի պլանավորման ծրագրանպատակային մեթոդը: Այս մեթոդը հանդիսանում է նախահաշիվների հիմնարար փաստաթղթերի կազմման հիմքը, որի օգնությամբ որոշվում են ծավալները, նպատակային ուղղվածությունը և կրթական հիմնարկների ծախսերի բյուջետային հատկացումների եռամսյակային բաշխումները: Կառավարման վերադաս մարմնի կողմից, պահանջվող ձևով նախահաշվի հաստատումը հանդիսանում է բյուջետային միջոցների օգտագործման միակ օրինական պլանային փաստաթուղթը:

Հանրակրթական հիմնարկների ֆինանսավորման նորմատիվային մեթոդի հիմնավորվածության նպատակով կարևոր նշանակություն է ստանում նվազագույն սոցիալական նորմատիվների մշակու-

մը: Նրանք ընդգրկում են բյուջետային ոլորտի աշխատակիցների աշխատավարձի միասնական տարիֆային ցանց, խմբերի և դասարանների լրացվածության, դպրոցականների և նախադպրոցական հիմնարկների սննդի հաշվարկային բնեղեն նորմաներ, որբերի հագուստներ, դպրոցականների սննդի հաշվարկային նորմաներ:

Ֆինանսական նորմատիվները որոշվում են մեկ սովորողի հաշվարկով ըստ յուրաքանչյուր հաստատության տեսակի, կրթական հիմնարկների կատեգորիաների, որոնք հանդիսանում են նախահաշիվների կազմման հիմքը:

Տարբեր կրթական հիմնարկների ծախսերի նախահաշիվների մշակման համար օգտագործվում են որոշակի արտադրական ցուցանիշների համախումբ: Այսպես դպրոցական հիմնարկների համար այդպիսի ցուցանիշներ են. երեխաների և խմբերի քանակը դպրոցներում, դասարաններում սովորողների քանակը, իսկ գիշերօթիկ դպրոցներում՝ սաների թիվը, արհեստագործական հիմնարկներում՝ ուսանողների (սովորողների) ընդունելությունը անվճար ուսուցման համակարգում և այլն:

4.2. Հանրակրթական դպրոցների ֆինանսական պլանավորման հաշվարկ

Ֆինանսական պլանավորման մեջ օգտագործվում են ոչ միայն որոշակի ցուցանիշների համախումբ ֆինանսական տարվա սկզբում և վերջում, այլ նաև սովորողների միջին տարեկան մեծությունը, որի չափը կախված է ընդունելությունից, ուսման ընթացքում դուրս եկողների և ուսումնական հաստատությունը ավարտողների թվաքանակից:

Սովորողների միջին տարեկան ցուցանիշը դպրոցների համար, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\overline{\text{ՈՒ}} = \frac{\text{ՈՒ}_1 \times \text{Ք}_1 + \text{ՈՒ}_2 \times \text{Ք}_2}{12}$$

որտեղ,

$\overline{\text{ՈՒ}}$ - սովորողների միջին տարեկան թվաքանակն է.

ՈՒ_1 – սովորողների թվաքանակն է, պլանային տարվա սկզբում (հունվարի 1-ի դրությամբ).

Ք_1 - ամիսների թիվը մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը.

ՈՒ_2 – սովորողների թվաքանակն ուսումնական տարվա սկզբում (սեպտեմբերի 1-ի դրությամբ)

Ք_2 - ամիսների թիվը ուսումնական տարվա սկզբից մինչև օրացույցային տարվա վերջը:

Այսպիսով, նախորոք հաշվարկվում է սովորողների թվաքանակը տարվա սկզբի և ամբողջ պլանավորվող տարվա համար, որը որոշվում է դասարանների խմբերի համար: Օրինակ, սովորողների թվաքանակը սեպտեմբերի 1-ի դրությամբ 1-4 դասարանների համար որոշվում է՝

$\text{ՈՒ}_2 = \text{ՈՒ}_{1-4}$ դասարանների հունվարի 1-ի դրությամբ + ընդունելության I դասարան – IV դասարան ավարտողներ:

Նույն սկզբունքով, բայց որոշակի առանձնահատկություններով հաշվարկվում է V-IX և X-XI դասարանների սովորողների թիվը:

Հանրակրթական դպրոցների նախահաշիվները կազմվում են ելնելով հանրակրթական հիմնարկների պետական բյուջետային ֆինանսավորման նորմաներից:

Հանրակրթական դպրոցների ամբողջ կրթության ծախսերը բաժանվում են ընթացիկ (ուղղակի), որոնք օգտագործվում են տարվա ընթացքում և հեռանկարային (կապիտալ) ծախսերի:

Ուղղակի ծախսերը, որոնք անմիջապես ազդում են մեկ ուսանողի տարեկան կրթության արժեքի վրա, ընդգրկում են՝

1. աշխատավարձի ծախսերը,
2. գրասենյակային պիտույքների, նյութերի և առարկաների ձեռք բերման ընթացիկ տնտեսական նպատակների համար ծախսեր,
3. գործուղման և տեղափոխումների հետ կապված ծախսեր,
4. տրանսպորտային ծախսեր,
5. կապի ծառայության վճարման ծախսեր,
6. շինությունների պահպանման վճարներ, ներառյալ ծախսեր հակահրդեհային միջոցառումների և այլ ծախսերի գծով,
7. փափուկ գույքի և համազգեստի ձեռք բերման ծախսեր,
8. այլ ընթացիկ ծախսեր, այդ թվում արտադրա-ուսումնական պրակտիկայի ծախսեր, ուսումնական լաբորատոր դասերի համար նյութերի ձեռք բերման ծախսեր, տարբեր ուսումնական նյութերի ու ծրագրերի հրատարակում և ձեռք բերում, պարբերականներ և այլ ծախսեր:

Կապիտալ (հեռանկարային) ծախսերը ընդգրկում են` շենքերի և շինությունների պահպանման ծախսեր, թանկարժեք սարքավորումների, կահույքի ձեռք բերում, կապիտալ և ընթացիկ վերանորոգում: Այստեղ ընդգրկվում են սոցիալական բնույթի ծախսեր, մասնավորապես, սովորողների սննդի ծախսերը:

4.3. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ծախսերի պլանավորումը և ֆինանսավորումը

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է եկամուտների և ծախսերի նախահաշիվի հիման վրա, որը կազմվում է պետական բյուջեի ծախսերի տնտեսական դասակարգմանը համահունչ:

Պետական պատվերի հիման վրա կատարվում է մասնագետների պատրաստում, աշխատակիցների վերապատրաստում և որակա-

վորման բարձրացման ֆինանսավորում: Այստեղ հիմք է ընդունվում պետական, այդ թվում գերատեսչական ֆինանսավորման նորմատիվները: Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները, իրավասու են իրականացնելու ուղղորդող թվերի սահմաններում ուսուցման նպատակային ընդունելություն:

Այդ գործունեությունը կարգավորվում է պայմանագրերով, կնքված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, նպատակ ունենալով նպաստել նրանց համապատասխան կրթական մակարդակի բարձրացում կադրերի նախապատրաստման գործում:

Եկամուտների և ծախսերի նախահաշվում արտացոլվում են ԲՈՒՀ-երի եկամուտները որոնք ստացվում են ինչպես պետական բյուջեից, պետական արտաբյուջետային հիմնադրամներից, այնպես էլ ձեռներեցության գործունեությունից: ՀՀ ուսումնական հաստատությունների արտաբյուջետային կարևորագույն աղբյուր է հանդիսանում վճարովի ուսումնական գործունեությունը, որը ձևավորում է հետևյալ եկամուտները՝

1. վճարովի կրթական ծառայություններից հետևյալ շրջանակներում՝
 - հիմնական մասնագիտական ծրագրային ուղղությունով արտոնագրմանը համապատասխան,
 - լրացուցիչ կրթական ծրագրեր և ծառայություններ,
 - հետբուհական մասնագիտական կրթության (մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, ինտերնատուրայի և օրդինատուրայի ուսուցում),
 - կադրերի որակավորման բարձրացում և վերապատրաստում,
 - միջազգային գործունեություն,
2. միջազգային կրթական դրամաշնորհներ,
3. այլ տեսակի օրենսդրությամբ չամրագրված վճարովի կրթական գործունեություն:

Ժամանակից պայմաններում վճարովի կրթական գործունեությանը գործնականում զբաղվում են բոլոր ուսումնական հաստատությունները: Սակայն ստացվող եկամուտների չափերը սահմանափակվում են մի կողմից՝ ծառայությունների ինքնարժեքով, իսկ մյուս կողմից էլ՝ այդ ծառայությունների համար սահմանված գնով: Ծառայության գնի և նրա ինքնարժեքի միջև եղած տարբերությունը արտաբյուջետային միջոցների ստացման հիմնական աղբյուրն է: Պրակտիկան ցույց է տալիս, որ վճարովի կրթական ծառայությունները համարվում են բարձր շահութաբեր գործունեություն:

Ուսումնական հաստատությունները տարբեր ձևով են օգտագործում իրենց արտաբյուջետային միջոցները: Նրանցից մի մասը՝ առավելություն են տալիս աշխատավարձին, մյուս մասը՝ սարքավորումների և համակարգիչների ձեռք բերմանը, իսկ երրորդները՝ մտահոգվում են սովորողների կենցաղային ու ընդհանուր մշակութային հարցերով:

ԲՈՒՀ-երի ծախսերին իրենց բուն էությանը համապատասխանում են բյուջետային դասակարգմանը: Տնտեսագիտական բովանդակությամբ բոլոր մակարդակի ծախսերը բաժանվում են ընթացիկ և կապիտալ ծախսերի: Առաջինը նախատեսվում է ընթացիկ ապահովման համար՝ մատակարարներից կրթական նպատակներով առարկաների ձեռք բերում, նյութեր ընթացիկ կարիքների համար, սննդի ծախսեր, բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատակիցների աշխատավարձեր:

Կապիտալ ծախսերը նպատակաուղղված են ապահովելու՝ ընդլայնված վերարտադրություն, ներդրումային գործունեություն և այլն: Կապիտալ ծախսերին են վերաբերվում կրթական հիմնարկների ունեցվածքի ավելացումը:

Պրակտիկան ցույց է տալիս, որ նյութական ծախսերի որոշման մեթոդիկան բոլոր կրթական կազմակերպություններում միանման են:

Քննարկենք բարձրագույն կրթական համակարգի աշխատավարձի ֆոնդը որոշելու առանձնահատկությունները:

ԲՈՒՀ-երն իրենց տրամադրության տակ եղած գումարների սահմաններում ինքնուրույն են որոշում աշխատավարձի վճարման ձևը և կարգը, հավելավճարների չափը, նյութական խրախուսման ձևերն ու չափերը, ինչպես նաև բյուջետային աշխատավարձի չափերը բոլոր աշխատողների համար

ԲՈՒՀ-երի աշխատավարձի ֆոնդի ձևավորման փուլում նախօրոք կազմվում է հաստիքացուցակ, որի կազմում ներառվում է առկա հետևյալ անձնակազմը՝

1. վարչական,
2. պրոֆետորա-դասախոսական,
3. ուսումնա-օժանդակ,
4. գիտական,
5. գիտատեխնիկական և գիտա-օժանդակ,
6. այլ սպասարկող և տնտեսական,
7. պահակներ:

Հաստիքացուցակը ենթակա է հաստատման առանց հրամանի և համարվում է պարտադիր կատարման ու մշտական պահպանման փաստաթուղթ:

4.4. Գիտական հիմնարկների պլանավորումը և ֆինանսավորման առանձնահատկությունները

Գոյություն ունի գիտական գործունեության երկու սուբյեկտներ՝ *ֆիզիկական անձիք* (գիտական աշխատողներ) և *իրավաբանական անձիք* (գիտական հիմնարկներ):

Գիտական աշխատող է համարվում այն քաղաքացին, որն ունի որոշակի որակավորում և զբաղվում է մասնագիտական և գիտա-

տեխնիկական գործունեությամբ: *Գիտական հիմնարկներ* են համարվում իրավաբանական անձիք, անկախ կազմակերպատիրական և սեփականության ձևից, ինչպես նաև գիտական աշխատողների հասարակական միավորումները, որոնք հիմնականում իրականացնում են գիտական և գիտատեխնիկական գործունեություն ու պատրաստում են գիտական աշխատողներ և գործում են կանոնադրական փաստաթղթերի շրջանակներում:

Հիմնարար գիտահետազոտական աշխատանքները ֆինանսավորվում են երկու մեթոդով, այդ թվում՝

- երբ ֆինանսական ռեսուրսները հատկացվում են, ֆինանսական նախահաշվի համաձայն, ամբողջ գիտական հիմնարկության պահպանման համար,
- երբ ֆինանսավորվում են առանձին թեմաներ: Վերջիններս համարվում են ավելի առաջադիմական, այն էլ սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պայմաններում:

Վերջին մեթոդը խթանում է կոլեկտիվի շահագրգռվածությունն ու աշխատունակությունը՝ գիտական նպատակների կատարման համար: Այս ձևով ֆինանսավորվում են նաև արտաբյուջետային և պայմանագրային թեմաները:

Գիտահետազոտական կազմակերպությունների աշխատանքների ծավալները որոշվում են պետական պատվերներով և ուղղակի պայմանագրերով:

Գիտական հիմնարկների աշխատավարձի ֆոնդի պլանավորումը կատարվում է աշխատողների միջին տարեկան թվաքանակի և միջին աշխատավարձի դրույքաչափերի տվյալներով: Հաշվի է առնվում նաև դասախոսների և գիտական աշխատողների աշխատավարձերը, որոնք զբաղվում են մագիստրանտների և ասպիրանտների ուսուցումով: Մատակարարներից առարկաների ձեռք բերումը և նյութական արժեքների ծախսումները որոշվում են բոլոր բյուջետային հիմնարկների համար գործող մեթոդիկական ցուցումներին

համաձայն: Գործուղման ծախսերը որոշվում են ընդունված նորմաների սահմաններում: Գիտահետազոտական աշխատանքների կատարման գծով նախատեսված ծախսերի պլանավորումն իրականացվում է հաշվարկի համար գործող համապատասխան մեթոդիկայի:

Գիտահետազոտական աշխատանքների գինը որոշվում է պատվիրատուների պայմանագրերի հիման վրա, որոնք անվանվում են պայմանագրային գներ, որոնց որոշման համար էլ հիմք են հանդիսանում ինքնարժեքի պլանային հաշվարկները և գիտական արտադրանքի շուկայական արժեքները: Պայմանագրային գները որոշում են նախօրոք, համաձայնեցվում են պատվիրատույի հետ և ձևակերպվում են համապատասխան արձանագրություններով:

ՀՀ գլխավոր գիտական կենտրոն է համարվում Գիտությունների ազգային ակադեմիան (ԳԱԱ), որը գործում է ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմում: ԳԱԱ-ն գործում է պետական ոչ առևտրային կազմակերպություն կարգավիճակով և որին տրված է իր գործունեությունը ղեկավարելու իրավունք ու տնօրինելու պետական սեփականություն հանդիսացող, նրան հատկացված գույքը: ԳԱԱ-ին միաժամանակ տրված է իրավունք՝ ստեղծել, վերակազմավորել և լուծարել իր կազմի մեջ մտնող հիմնարկները:

4.5. Գյուղատնտեսության ոլորտի բյուջետային կազմակերպությունների պլանավորման և ֆինանսավարման առանձնահատկությունները

Ինչպես բոլոր ժամանակաշրջաններում, այնպես էլ տնտեսավարման նոր հարաբերությունների պայմաններում կարևորվում են գիտական ու կրթական ոլորտների զարգացումը, որոնք ներառելով նաև պետական և ոչ պետական առևտրային կազմակերպություններ

իրենց աշխատանքային գործունեությամբ նպաստում են երկրի տնտեսական աճի ավելացմանը: Գիտության և կրթության ոլորում գործում են՝

1. գիտական կազմակերպություններ, որոնք անկախ դրանց ճյուղային պատկանելիությունից կատարում են գիտական հետազոտություններ, ներառելով հիմնարար կիրառական հետազոտություններ և մշակումներ, գիտության բոլոր ճյուղերում ինչպես նաև գիտատեխնիկական ծառայություններ,
2. պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հասկատություններ, որոնք ուսուցումը կազմակերպում են երկաստիճան համակարգով (բակալավր և մագիստրոս), առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով,
3. քոլեջներ, որոնք ներառվում են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդհանուր թվում, որոնք մասնագետներ են պատրաստում միջին մասնագիտական կրթական ծրագրերով,
4. մմանատիպ այլ գիտակրթական կազմակերպություններ:

Ելնելով վերոնշյալներից, պետք է նշել, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում մույնպես գործում են պետական ոչ առևտրային կազմակերպություններ, որոնց թվաքանակը 2010թ. վերջի դրությամբ 21-ն են, որոնցից 6-ը գիտական կենտրոններ, 9-ը գյուղատնտեսական քոլեջներ, մնացած 6-ը տարբեր մասնագիտական բնույթի կազմակերպություններ (տես հավելված 3-ը): Գիտական կենտրոնների գործունեության պլանավորումը և ֆինանսավորումը կատարվում է §4.4-ում բերված սկզբունքներով, քոլեջները հիմնականում իրականացվում է ինչպես գյուղատնտեսության նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից, այնպես էլ ինքնուրույն սկզբունքով՝ վճարովի սովորողների համար, իսկ մնացած կազմակերպություններինը՝ ըստ ՀՀ կառավարության և ՀՀ

գյուղատնտեսության նախարարության կողմից նրանց առջև դրված խնդիրների:

Միաժամանակ, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ ֆինանսների նախարարությունների հետ համատեղ հաստատում են գյուղատնտեսության ոլորտում իրականացվող, գիտահետազոտական աշխատանքների թեմաները, որոնց կատարման ժամկետները, կատարողների կազմը, իսկ դրանց համահունչ կազմված ծախսերը ներկայացնում են ՀՀ Կառավարությանը և, այնուհետև, ներառում առաջիկա տարվա բյուջեի նախագծի մեջ: Այդ նպատակների համար նախատեսվող ծախսերը պետական բյուջեից, որպես հատկացումներ, միաժամանակ հաշվի են առնվում գյուղատնտեսության նախարարության բյուջետային կազմակերպությունների ֆինանսական պլանների մեջ և մտցվում նախահաշիվների մեջ, համաձայն պայմանագրերի, որպես պետական պատվեր:

Այս կազմակերպությունները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ նաև տնտեսական բնույթի այլ պայմանագրերի համաձայն, որոնց հիման վրա նույնպես կազմվում են ֆինանսական պլաններ: Ֆինանսական պլանավորման նպատակն է ապահովել արտադրական ծրագրերով իրականացվող ծախսերի փոխհատուցումը ֆինանսական ռեսուրսներով: Ֆինանսական պլանների կազմումը հիմնվում է արտադրական և տնտեսագիտական ցուցանիշների վրա: Պլանավորման փուլում կարևորվում են հետևյալները՝ նախահաշիվների մշակումը և հաստատումը, նախահաշվա-ֆինանսական հաշվարկների կամ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմումը: Բերված հաշվարկները կազմվում են ելնելով նախատեսված աշխատանքների ծավալից, նյութական ծախսերի գործող նորմերից, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներից, աշխատակիցների թվաքանակից, աշխատանքի վճարման համակարգից և այլ ցուցանիշներ: Որոշվում են ֆինանսավորման համապատասխան արդյուրները և միաժամանակ ընտրվում են ծախսերի կրճատման և

եկամուտների համար ավելացման համար այն միջոցառումները, որոնք նախատեսվում են դրանց դիմաց վճարելիության սկզբունքով: Տարվա ընթացքում ֆինանսական միջոցների լրացուցիչ պահանջ առաջանալու դեպքում, այն կարող է բավարարվել միայն նախահաշվային փաստաթղթերում համապատասխան ճշգրտում մտցնելուց հետո:

Հետագայում օպերատիվ աշխատանքը կենտրոնացվում է ժամանակին բյուջետային ֆինանսավորում բացելու և հատուկ միջոցառումների գծով ծախսերը փոխհատուցելու համար:

Հատուկ միջոցառումների ծախսերը ի հաշիվ պետական և տեղական բյուջեների ֆինանսավորվում են նախահաշիվների համաձայն և բացված հատկացումների ու փոխանցված միջոցների սահմաններում: Մինչև տարվա վերջը չօգտագործված բյուջետային ֆինանսական միջոցները փակվում են: Ֆինանսավորման պլանները և հաստատված նախահաշվային փաստաթղթերը մինչև բանկ ներկայացնելը, ոչ ուշ քան տվյալ տարվա մարտի 1-ը պետական հիմնարկությունները ու կազմակերպությունները ֆինանսավորվում են ինչպես բյուջետային հատկացումների այնպես էլ սեփական միջոցների հաշվին:

Միաժամանակ, բյուջետային կազմակերպությունների ֆինանսական աշխատանքով զբաղվողները պետք է ամեն ինչ անեն ապահովելու ժամանակին միջոցների ստացումը նախատեսված ծախսերի կատարումը փոխհատուցելու համար:

Ծախսերը պետք է իրականացվեն նախօրոք կազմված նախահաշվային փաստաթղթերի համահունչ, թույլ չտալով, գերաձախսի կատարում և նույնիսկ հասնել նրան որ տեղի ունենա տնտեսում: Այսինքն ծախսային միջոցներն օգտագործել արդյունավետ հսկողություն սահմանելով դրանց նպատակային օգտագործման վրա: Մասնավորապես, նրանք վերահսկում են գնված և դրանց դիմաց վճարված նյութատեխնիկական միջոցների արժեքների դրանց արդյունա-

վետ օգտագործման, սահմանված օրենքով հասանելիք աշխատավարձի ճիշտ հաշվարկման, ժամանակին դրա վճարման, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց օրինական վճարումների, գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության ապահովման, տրված կանխավճարների հիմնավորվածությանը, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վիճակի, ժամանակին հասանելիք գումարների և պարտքերի վճարումների վրա:

Միջոցների ծախսման խախտումների դեպքեր հայտնաբերելու դեպքում գյուղ. նախարարությունը և համապատասխան ֆինանսական մարմինները պետք է դադարեցնեն ֆինանսավորումը մինչև առկա թերությունների վերացումը:

Ընթացիկ, եռամսյակային, տարեկան և վիճակագրական հաշվետվությունների կազման, ստուգման և վերհսկողության ընթացքում իրականացվում է միջոցառումներ՝ միջոցների խնայողական օգտագործման, ստացված ֆինանսավորման կարգով հատուկ միջոցառումների և սոցիալ-կենցաղային կարիքների ծախսերի նկատմամբ:

Գյուղատնտեսության ֆինանսական պլանավորումը-ներտնտեսական պլանավորման կարևորագույն մասն է: Այն ընդգրկում է ռազմավարական նպատակների իրականացման համար ֆինանսական ցուցանիշների համախումբը:

Գյուղատնտեսության ոլորտի, այդ ֆինանսական ցուցանիշների պլանավորումը կարող է իրականացվել մի քանի մեթոդներով.

Նորմատիվային մեթոդ, որի էությունը կայանում է նրանում, որ նախօրոք սահմանված նորմաների և տեխնիկա-տնտեսական նորմատիվների հիման վրա հաշվարկվում են ինչպես գիտահետազոտական աշխատանքների, այնպես էլ արտադրական գործունեություն իրականացնելու հետ կապված ֆինանսական միջոցների պահանջարկը և դրանց կազմավորման աղբյուրները: Այդպիսի նորմատիվներ են հանդիսանում հարկադրությաչափերը, ամորտիզացիոն հատ-

կացումների չափերը, շրջանառու միջոցների պահանջի նորմատիվները և այլն: Այս մեթոդը հանդիսանում է ամենապարզը, այսինքն իմանալով նորմատիվները և քանակական տվյալները, կարելի է հեշտությամբ հաշվարկել պլանավորվող ցուցանիշները:

Հաշվարկա-վերլուծական մեթոդը օգտագործվում է այն դեպքում, երբ բացակայում են նորմատիվները, իսկ ցուցանիշների միջև փոխկապակցությունը սահմանված է անուղղակիորեն, դրանց դիմամիկայի փոխադարձ կապերի վերլուծությունների հիման վրա: Կատարված վերլուծության արդյունքների հիման վրա, հաշվարկվում են պլանային ցուցանիշների մեծությունները:

Պլանային հաշվարկների օպտիմալացման մեթոդը, որի էությունը կայանում է հետևյալում՝ մշակել պլանային հաշվարկների մի քանի տարբերակներ, որոնցից պետք է ընտրել լավագույնը կամ, այլ կերպ, ամենաօպտիմալը:

Հաշվարկային կամ բալանային մեթոդը, որը գյուղատնտեսական ուղղվածության բյուջետային կազմակերպությունների ֆինանսական պլանավորման ամենահիմնական մեթոդն է: Այս մեթոդի կիրառման ժամանակ իրար հետ համեմատվում են ֆինանսական պլանի առանձին բաժիններում ընդգրկված համապատասխան հոդվածները և դրանց ֆինանսավորման ծածկման աղբյուրները: Արդյունքում ապահովվում է նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների, ծախսերի ու եկամուտների հավասարակշռվածությունը:

4.6. Մշակույթի ոլորտի բյուջետային կազմակերպությունների ֆինանսների առանձնահատկությունները

Մշակութային ոլորտին են վերաբերվում գործունեության նրա ենթակայության այն բյուջետային կազմակերպությունները, որոնց գոր-

ծունեություններն ուղղված են բավարարել բնակչության անհրաժեշտ և յուրահատուկ պահանջմունքները: Մշակութային ոլորտից են՝ մշակութա-ժամանցային հիմնարկների, համերգա-կրկեսայինի, թատրոնների, կինոյի, ռադիոյի և հեռուստատեսության, գրահրատարակչության, մշակույթի պատմական հուշարձանների նորոգումների և պատմա-ճարտարապետական գործունեությունները:

Այդ հիմնարկները և կազմակերպությունները լուծում են առանձնահատուկ խնդիրներ՝ պահպանելու պատմական և ազգային մշակութային հուշարձանները, մշակութային նվաճումները գրականության ոլորտում, արվեստի գեղարվեստա-ստեղծագործական, երաժշտության, գեղանկարչության, քանդակագործության, մարդկանց շփումը ստեղծագործական մշակույթին, ինչպես նաև նպաստելու այդ ոլորտներում հետազոտությունների կատարմանը:

Մշակույթի ֆինանսավորումը: Մշակույթի ոլորտում որպես կարևորագույն գործառույթի իրականացում, դա հասարակության սոցիալ-տնտեսական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստելու ուղղվածությունն է, որն իր հերթին դրական ներգործություն կունենա երկրի տնտեսության վերջնական արդյունքների վրա: Մշակույթը, ինչպես և կրթությունը ֆինանսավորվում են պետական բյուջեից, սակայն նրանք ունեն առևտրային գործունեության իրականացնելու զգալի պոտենցիալ, որի խելամիտ օգտագործումը կարող է էականորեն լավացնել մշակույթի ֆինանսական վիճակը:

Գոյություն ունեն մշակույթի ոլորտի ֆինանսավորման համար բյուջետային միջոցներից հատկացվող գումարների չափերը որոշելու մի քանի եղանակ: Դրանք են՝

1. բյուջետային ֆինանսավորման նորմաների հիման վրա,
2. ազգային եկամտից սահմանվող տոկոսի հիման վրա,
3. բյուջեի ծախսային մասի ընդհանուր գումարից որոշակի տոկոսի հիման վրա:

Բյուջետային միջոցների հաշվին մշակույթի ֆինանսավորման չափը որոշվում է՝ ելնելով բյուջեի ծախսերի ընդհանուր գումարի նկատմամբ հաշվարկված տոկոսից: Մշակույթին ամեն տարի պետք է ուղղվի ծախսային մասի 2 տոկոսից ոչ պակաս գումարներ: Բյուջետային միջոցները հատկացվում են նպատակային թեմատիկ ծրագրերի կատարման, կապիտալ ներդրումների ֆինանսավորման, սոցիալ-ստեղծագործական պատվերների համար:

Մշակույթի ֆինանսավորումն իրականացվում է կրթության ֆինանսավորման մույնատիպ մեթոդական ցուցումով: Ծախսերի բաժանումն իրականացվում է նպատակային և տնտեսագիտական հողվածներով, նախօրոք կազմված նախահաշիվների հաշվարկներին համապատասխան:

Դիտարկենք մշակույթի բյուջետային ֆինանսավորման նախահաշվային հաշվարկների առանձնահատկությունները պետական թատրոնի օրինակով:

Թատրոնը՝ ոչ առևտրային կազմակերպություն է, և որի հիմնադիրը կարող է լինել

1. Հանրապետական գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները:
2. Քաղաքացիները և իրավաբանական անձիք, այդ թվում նաև արտերկրյա քաղաքացիները և այն անձիք ովքեր չունեն քաղաքացիության, սակայն թույլատրվում է նրանց իրականացնելու համատեղ ձեռնարկատիրական գործունեություն:

Թատրոններ կարող են ստեծվել հիմնադիրի կամ հիմնադիրների կողմից սեփական նախաձեռնությամբ:

Հանդիսանալով իրավաբանական անձ՝ թատրոնը համարվում է արդեն ձևավորված պետական գրանցում ստանալուց հետո: Թատրոնի գործունեության կառավարումը դրվում է այն մարմնի վրա, որն այն հիմնադրել է: Թատրոնի հիմնադիրները իրավունք ունեն հաստատելու իրենց գործունեության կանոնադրությունը, կատարելու

նրանում համապատասխան փոփոխություններ, նշանակելու և ազատելու աշխատանքից թատրոնի ղեկավար անձնակազմին և իրականացնելու կանոնադրությանը համահունչ այլ գործընթացներ:

Թատրոնի գործունեության ֆինանսավորումը իրականացվում է հետևյալ աղբյուրների հաշվին, այդ թվում՝

1. հիմնադիրի հատկացումներ, այսինքն բյուջետային ֆինանսավորում,
2. դրամական միջոցներ հավաքագրում, ներկայացումների և այլ միջոցառումների տոմսերի վաճառքից, ինչպես նաև այլ ծառայություններից,
3. աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերով հասանելիք մուտքագրումներ: Պայմանագրերը կնքվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական ու ֆիզիկական անձանց, այդ թվում՝ նաև թատրոնի հիմնադիրի կողմից:
4. Ինքնակամ վճարներ, դրամաշնորհներ և այլ միջոցներ, օրինակ ստացված ժառանգություններից:
5. Վարկեր բանկերից և այլ վարկային կազմակերպություններից:
6. Եկամուտներ ձեռնարկատիրական գործունեությունից:

Ընդհանուր առմամբ, թատրոնի բյուջետային ֆինանսավորման ծավալը որոշվում է հիմնադիրի կողմից սոցիալ-տնտեսական նորմատիվների հիման վրա, որոնց կազմում ներառվում են աշխատակիցների տարբեր խմբերի թվաքանակը, ներկայացումների քանակը, ստեղծագործական գործընթացների ֆինանսասկան ասպահովումը, ներառյալ նաև այն հաշվարկային ցուցանիշները, որոնք օգտագործվում են միայն բյուջետային ֆինանսավորման ծավալները որոշելու համար:

Յուրաքանչյուր պետական թատրոն իրավունք ունի ինքնուրույն որոշելու դերասանների և գեղարվեստական անձնակազմի թվաքա-

նակը, ստեղծագործական, արտադրական գործունեության ցուցանիշները, հաշվի առնելով թատրոնի առանձնահատկությունները և կոլեկտիվի տնտեսական ու շահադիտական հնարավորությունները: Մշակութային հիմնարկների ֆինանսավորման ծավալները որոշվում են տարբեր եղանակներով: Մշակութային հիմնարկների համար կազմվում են նախահաշիվներ, որոնք բաղկացած են երկու բաժիններից՝ եկամուտներ և ծախսեր: Բյուջետային միջոցների հատկացման համար գործում են հաճախումների թիվը, որը և հանդիսանում է նախահաշիվների հիմքը:

**ԳԼՈՒԽ 5. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՈԼՈՐՏՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖԻՆԱՆՍՆԵՐԸ**

5.1. Առողջապահության ֆինանսավորումը

Ժամանակակից աշխարհում առողջապահության ֆինանսավորումը իրականացվում է բյուջետային աղբյուրներից, գործատուների և բնակչության միջոցներից: Առայժմ գոյություն ունեն առողջապահության ֆինանսավորման երեք մոդելներ՝

1. *Բյուջետասպահովագրական մոդել*, որի շրջանակներում առողջապահությունը ֆինանսավորվում է գործատուների նպատակային, աշխատակիցների և բյուջետային միջոցների հաշվին ապահովագրական գործընթացին համահունչ: Այս մոդելը ամենատարածվածն է և այն օգտագործվում է հիմնականում զարգացած երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա և այլն):
2. *Բյուջետային մոդել*, ըստ որի ֆինանսավորումն իրականացվում է հիմնականում բյուջետային միջոցների հաշվին (Մեծ Բրիտանիա):
3. *Ձեռներեցության մոդել*, որի շրջանակներում ֆինանսական ապահովումն իրականացվում է բնակչությանը վաճառվող բժշկական ծառայությունների և կամավոր բժշկական ապահովագրական հիմնադրամների հաշվին (ԱՄՆ):


Գոյություն ունի ֆինանսավորման նոր աղբյուր, որը գործատուների անդամավճարներն են աշխատող բնակչության համար: Այն անվանվում է պարտադիր բժշկական ապահովագրություն (ՊԲԱ) և ծառայում է բնակչության առողջության պահպանությանը:

Պարտադիր բժշկական ապահովագրության հիմնական նպատակները հետևյալներն են՝

- առողջապահության ֆինանսական հնարավորությունների ընդլայնում, արտաբյուջետային միջոցների ներգրավման հաշվին և առաջին հերթին, տնտեսավարող սուբյեկտների միջոցների հաշվին,
- ամբողջ բժշկական պրոֆիլակտիկ գործունեության կառավարման ապակենտրոնացում, բժշկական ապահովագրության հիմնական իրավունքների փոխանցումը տեղերին,
- բժշկական սպասարկման ոլորտում կատարվող ծախսումների տնտեսական արդյունավետության բարձրացում,
- առողջապահական հիմնարկների տնտեսական ինքնուրույնության ընդլայնում, աշխատանքի վերջնական արդյունքների, սոցիալական և տնտեսական պատասխանատվության բարձրացում,
- նախապայմանների ստեղծում բժշկական ծառայությունները շուկայական հարաբերությունների անցման համար, պահպանելով բնակչության անվճար բժշկական ծառայությունների մատուցման առավելագույն մակարդակը,
- ստեղծել նյութական շահագրգռվածություն հիմնարկների և քաղաքացիների աշխատանքի պայմանների լավացմամբ, բնապահպանական գործունեության, հիվանդությունների կրճատման, ընդհանուր պրոֆիլակտիկայի և կյանքի առողջ կենսակերպի հաշվին: Այս փուլում գլխավոր խնդիրն է դրամական միջոցների հավաքագրումը, ուղղված առողջապահության ֆինանսավորմանը, որը հանդիսանում է՝
 - ա) արտաբյուջետային նոր նպատակային ֆինանսական աղբյուրների ներմուծում,
 - բ) պարտադիր բժշկական ապահովագրություն իրականացնելու համար, կառավարման կառուցվածքի ստեղծում,

- կենտրոնացնել հիմնական գումարները, ուղղված բժշկական օգնության տրամադրման ֆինանսավորմանը պարտադիր բժշկական ապահովագրության (ՊԲԱ) համակարգում:

Առողջապահության ֆինանսական ապահովման համակարգը, աղբյուրները և նրանց օգտագործման ուղղությունները բերված են թիվ 5.2.1 գծապատկերում:



Գծապատկեր 5.2.1. Առողջապահության ֆինանսական ապահովումը

Իրենց հերթին գերատեսչական բժշկական հիմնարկները ֆինանսավորվում են 2 աղբյուրների հաշվին, այդ թվում՝

- պետական բյուջեի միջոցներ,

- պետական և ոչ պետական հիմնարկ-կազմակերպությունները, որոնք ունեն իրենց բժշկական կառույցները և որոնք ֆինանսավորվում են այդ հիմնարկների հաշվին:

Բացի դրանից, առևտրային կազմակերպությունները զգալի միջոցներ են հատկացնում պետական բժշկական հիմնարկներին, նրանց կողմից մատուցված վճարովի բժշկական ծառայությունների դիմաց:

5.2. ՀՀ Պետական իշխանության մարմինները և նրանց ֆինանսավորման աղբյուրները

Պետական գործունեությունը կրում է նպատակաուղղված բնույթ: Պետական գործառույթներն իրականացնում են պետական և ոչ պետական մարմինները, որոնց միասնությունը կազմում է պետական մեխանիզմը: Պետական ապարատը ձևավորվում է պետական իշխանության մարմինների ստեղծման ճանապարհով, որոնց գործունեությունն անմիջապես ապահովում է պետության իրական գործառույթները:

Պետական բյուջեի ծախսերի ֆունկցիոնալ դասակարգման առաջին բաժինը, դա պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պահպանման ծախսերն են, իսկ երկրորդից հինգերորդ բաժինները համապատասխանաբար՝ դատական, արդարադատական գործունեության, պետության անվտանգության և դատախազական մարմինների պահպանման ֆինանսավորման հատկացված ծախսումներն են:

Ամբողջությամբ պետական կառավարման մարմինների բյուջետային ֆինանսավորումը իրականացվում է ծախսերի նախահաշիվների համաձայն, որը կազմվում է ՀՀ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմանը համաձայն, որտեղ ներառվում են

նպատակային հողվածներ և ծախսերի առանձնահատուկ տեսակներ: Քննարկենք ծախսերի պլանավորումն ուղղված պետական կառավարման մարմինների պահպանմանը:

Պետության գործունեության կառավարման առանձնահատկությունը պայմանավորված է պետական բյուջեի կառավարման ծախսերով, որոնք հանդիսանում են պետական մարմինների գործունեության կարգավորման ֆինանսա-նյութական հիմքը, իրականացնելով երկրի տնտեսության կառավարում:

Պետական կառավարման մարմինները, ինչպես նաև յուրաքանչյուր բյուջետային կազմակերպություն, մշակում են ծախսերի նախահաշիվ, որում արտացոլվում են հատկացվող բյուջետային միջոցների ծավալները, նպատակային ուղղվածությունը և եռամսյակային բաշխումը: Ընդ որում այդ հիմնարկների ծախսերի նախահաշիվներում, բյուջետային ֆինանսավորումը ընդգրկում է հավասար քանակությամբ նպատակային հողվածներ: Բյուջետային կազմակերպությունների սեփական եկամուտների համար կազմվում են այլ բնույթի նախահաշիվներ:

Պետական կառավարման անձնակազմի գործունեության արդյունավետությունը որոշվում է ընդհանուր կրթական մակարդակով, կադրերի մասնագիտական պատրաստվածությամբ, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, ներառյալ նաև վարչաիրավական կարգավորումը:

ՀՀ պետական կառավարման բոլոր մարմինների պահպանման ծախսերը լիմիտավորվում են պետության կողմից: Հանրապետության նախագահը և Կառավարությունը իրականացնում են հանրապետական մարմինների իրավական կարգավորումը:

Պետական բյուջեի գործառույթային դասակարգման 1 բաժինը հանդիսանում է պետական կառավարման ծախսերը, որի կազմում բերվում են հողվածներ, երկրի ղեկավարի և նրա աշխատակազմի պահպանման, օրենսդիր մարմնի, ՀՀ Կառավարության, ֆինանսա-

կան և հարկային մարմինների գործունեության, և այլ ծախսերի հետ կապված: Կառավարման ապարատի պահպանման ծախսերը որոշվում են հաստատված հաստիքացուցակների և ծախսերի նախահաշիվների հիման վրա: Նախարարությունների և գերատեսչությունների կառավարման ապարատի աշխատակիցների թվաքանակը, որոշում է ՀՀ կառավարությունը, իսկ դրանց քանակը՝ Հանրապետության Նախագահը: Պարբերաբար տեղի է ունենում նախարարությունների և գերատեսչությունների վերակազմավորում, ստեղծվում են նորերը, լուծարվում են գոյություն ունեցողներից մեկը կամ մի քանիսը:

Բյուջեից ֆինանսավորվող կառավարման ծախսերի կարգավորման անբաժան մասն է հանդիսանում պետական մարմինների ծախսերի նախահաշիվը: Բյուջետային նախահաշիվը ընդգրկում է հետևյալ ընթացիկ և կապիտալ ծախսերի նպատակային հոդվածները:

Ա. Ընթացիկ ծախսեր

1. Պետական ծառայողների աշխատանքի վարձատրությունը, որում ներառվում են ծախսերի տարբեր տեսակներ, այդ թվում՝
 - պաշտոնական դրույքերն ըստ հաստիքացուցակի,
 - աշխատավարձի հավելավճարներ,
 - երկարատև ծառայության համար հավելավճարներ,
 - աշխատանքի արդյունքներով հավելավճար,
 - նյութական օգնություն:
2. Մատակարաններից առարկաների ձեռք բերում և նյութական ծախսեր, որոնց մեջ մտնում են ծախսեր կապված՝ վառելիքա-քսուկային նյութերի, և հատուկ վառելիքի, ներառյալ դրանց տեղափոխման և պահեստավորման ծախսերը, գրասենյակային և տնտեսական բնույթի առարկաների, փափուկ գույքի և համագզեստի, սննդամթերքի և այլ ծախսվող նյութերը:

3. Նպատակային ծախսային հողվածները, որոնց թվին են պատկանում գործուղման և ծառայողական տեղափոխումների ծախսերը և տրանսպորտային ծառայությունների վճարները:
4. Կոմունալ ծառայությունների վճարները, կապված՝ շենքերի և շինությունների պահպանության, դրանց լուսավորման, ջրամատակարարման, վարձակալման հետ, այդ թվում դրանց մոնտաժը, կարգավորումն ու շահագործումը, տեղեկատվական և հաշվողական աշխատանքների վճարները, աշխատանքների պահպանման միջոցառումները, իրավաբանական, աուդիտորական և այլ ծառայությունները: Կոմունալ ծառայությունները հաշվարկվում են կնքված պայմանագրերի հիման վրա:

Բ. Կապիտալ ծախսեր

Հիմնական նպատակային ծախսային հողված է, որն առնչվում է կապիտալ ներդրումների և հիմնական միջոցների հետ և որում ընդգրկվում են հետևյալ ծախսերը, կապված՝ արտադրական և ոչ արտադրական սարքավորումների ու երկարատև օգտագործման առարկաների ձեռք բերման և արդիականացման հետ: Պետական հիմնարկների մեքենաների, սարքավորումների և այլ հիմնական միջոցների արդիականացման ծախսերը վերագրվում են անարտադրական միջոցներին:

Անհրաժեշտ է նշել, որ իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների ծախսերի կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն աշխատանքի դիմաց վճարման, հանգստի և բուժման կազմակերպման, թոշակների և նպաստների հետ կապված ծախսերը: Ընդ որում, աշխատանքի վճարումը ունի որոշակի առանձնահատկություններ կախված պետական կառավարման մարմնից:

5.3. Ազգային պաշտպանության մարմինների, արդարադատական գործունեության և պետության անվտանգության ապահովման ֆինանսները

Ազգային պաշտպանության, արդարադատության գործունեության և պետության անվտանգության ապահովումը երկրի կարևորագույն խնդիրներից են. ստեղծել և ամրապնդել ազգային անվտանգության համակարգը, երաշխավորել պահպանելու Հայաստանի Հանրապետությանը որպես ինքնիշխան պետություն, պահպանելով նաև նրա տարածքային ամբողջականությունը, պատմական մշակութային և հոգևոր անձեռնամխելիությունը:

Այս համակարգում կարևոր դեր ունի ազգային պաշտպանությունը, որն ապահովում է երկրի ռազմական քաղաքականությունը: Ռազմական բյուջեի ծախսերն ուղղված ազգային պաշտպանությանը, իր բաժիններով և ենթաբաժիններով, ֆունկցիոնալ և գերատեսչական դասակարգմամբ, նպատակային ծախսային հողվածներով ու տեսակներով, խմբավորվում են ըստ հետևյալ ուղղությունների՝

1. ոչ առևտրական բնույթի գործարքներ,
2. գլխահետագոտական, փորձարարական և կոնստրուկտորական աշխատանքներ,
3. գերատեսչական ծախսեր կրթության բնագավառում,
4. գերատեսչական ծախսեր առողջապահության բնագավառում,
5. ռազմական կառավարման կենտրոնական մարմինների պահպանություն,
6. զորամասերի ռազմական ապահովում,
7. մարտական պատրաստականություն և զորամասերի նյութատեխնիկական ապահովում,
8. զենքի, ռազմական տեխնիկայի, արտադրատեխնիկական նշակության արտադրանքի և ունեցվածքի ձեռք բերում,

9. զենքի, ռազմական տեխնիկայի, արտադրա-տեխնիկական նշանակության արտադրանքի և ունեցվածքի վերանորոգում,
10. հատուկ և այլ օբեկտների շինարարություն,
11. զինվորականների ապահովագրական երաշխիքներ,
12. զինվորականների հավաքագրման և արտագործամասային պատրաստականություն ապահովում,
13. խաղաղասիրական գործունեության և կոլեկտիվ անվտանգության պատրաստականություն ու ապահովում,
14. ազգային պաշտպանության համար ապահովել համապատասխան ճյուղերի գործունեությունը:

Ազգային պաշտպանության ռազմական բյուջեի ծախսերի պլանավորումը իրականացվում է ծախսերի գերատեսչական դասակարգմանը համապատասխան. բյուջետային հատկացումների բաշխման արտացոլում, պետական բյուջեից միջոցների ուղակի ստացում և ծախսատեսակների նպատակային իրականացում:

Պետական բյուջեից միջոցների առաջին ստացողը, որը ձևավորում է վերոնշյալ դասակարգման առաջին մակարդակը, հանդիսանում է ՀՀ պաշտպանության նախարարությունը: Ծախսերի նպատակային հողվածների դասակարգումը ձևավորվում է նշված դասակարգման երկրորդ մակարդակը և ըստ որի իրականացվում է ֆինանսավորում գործունեության կոնկրետ ուղղություններով, պետական բյուջեի միջոցներից ուղղակի կատարվող ծախսերի գործառույթային դասակարգման առանձին բաժիններով և ենթաբաժիններով:

«Ազգային պաշտպանություն» բաժնում էլ առավել խոշոր նպատակային ծախսային հողված է հանդիսանում շինարարության և ՀՀ Ջինված ուժերի պահպանման հետ կապված ենթաբաժինը, որն ընդգրկում է հետևյալները՝

- գործամասի անձնակազմի ապահովումը,
- մարտական պատրաստության և զորքերի նյութատեխնիկական ապահովումը,

- զինամթերքի և ռազմական տեխնիկայի գնում,
- գիտահետազոտական և փորձա-կոնստրակտորական աշխատանքներ,
- զենքի և ռազմական տեխնիկայի վերանորոգում,
- հատուկ և այլ կառույցների շինարարություն:

Պետական բյուջեի նախագիծը որում ընդգրկվում է ազգային պաշտպանության, արդարադատության գործունեության և պետական անվտանգության գործունեության հետ կապված ծախսերը, համաձայնեցվում են համապատասխան շահագրգիռ կողմերի հետ, իսկ այնուհետև ներկայացվում է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն ու հաստատմանը:

Պետական բյուջեի կատարման արդյունքներով, հաշվետու ժամանակաշրջանի համար գերատեսչությունների կողմից, հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ ֆինանսների նախարարություն, որտեղ ստուգվում և վերլուծվում է նպատակային օգտագործման տեսանկյունից, նպատակահարմարությունից և ֆինանսական ռեսուրսների ծախսման հիմնավորվածությունից:

Միջոցների ճիշտ օգտագործման հսկողությունն իրականացնում են հատուկ ֆինանսական ծառայությունները, որոնք գտնվում են զինվորական մասերում, ուսումնական հաստատություններում, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարությանն առընթեր ստորաբաժանումներում: Բացի դրանցից ստուգումներ են իրականացվում նաև ՀՀ Վերահսկիչ պալատի և ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության կողմի:

Պետական բյուջեի միջոցների կառավարման կատարելագործման և ֆինանսական կարգապահության ուժեղացման նպատակով, ՀՀ Կառավարությունը մշտապես իրականացնում է հսկողություն պետական կառավարման մարմինների, ինչպես նաև, բոլոր ուժային կառույցների, ՀՀ ֆինանսների նախարարությանն առընթեր գանձապետարանի միջոցով:

**ԹԵՍԱ 6. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

***6.1. Բյուջետային կազմակերպության ֆինանսական ծառայությունը
և նրա գործառույթները***

Բյուջետային կազմակերպության ֆինանսական աշխատանքները, ինչպես ցանկացած իրավաբանական անձանց մոտ, իրականացվում է ֆինանսական ծառայության միջոցով: Կախված կազմակերպության չափից, ֆինանսական ծառայությունը կարող է ունենալ մեկ կամ մի քանի մասնագիտացված ստորաբաժանում: Այդ ստորաբաժանումների կառուցվածքը և գործունեության ուղղվածությունը կախված է ոչ այնքան գործունեության տեսակից, թե ինչ նպատակով է ստեղծվել բյուջետային կազմակերպությունը, այլ նրանով որ հանդիսանում է բյուջետային միջոցների գլխավոր կարգադրիչը կամ միայն նրանով ստացողը, ինչպես նաև նրանով, թե ինչպիսի վճարովի ծառայություններ է մատուցում: Մասնավորապես, այժմյան պայմաններում վերջինս ունի հատուկ մեծ նշանակություն: Քանի որ վճարովի ծառայությունների մատուցումը բյուջետային կազմակերպության համար գործունեության համեմատաբար նոր ուղղություն է, հետևաբար այդ պատճառով էլ միշտ չէ, որ նրան պատշաճ ուշադրություն է դարձվում: Միաժամանակ, հաշվի առնելով բյուջետային կազմակերպության սահմանափակ չափերը և համեմատաբար համեստ հատկացվող միջոցները, աստիճանաբար վճարովի ծառայությունների մատուցումը հանդիսանում է բյուջետային կազմակերպությունների գործունեության հեռանկարային ուղղություններից մեկը:

Ամեն դեպքում բյուջետային կազմակերպության ֆինանսական ծառայությունը պետք է ընդգրկի՝

1. պլանային կառուցվածք (բաժին կամ խումբ), որի պարտավորություններում ներառվում է բյուջետային կազմակերպության եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմումը, ինչպես նաև հեռանկարային պլաններով ապահովումը: Վճարովի ծառայությունների իրականացման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում կազմել բիզնես-ծրագրեր ֆինանսական և ներդրումային ծրագրերի նախապատրաստումը, միաժամանակ այս կամ այն նախագծի արդյունավետությունը հիմնավորումը և ֆինանսական տարբերակ ընտրությունը:
2. Հաշվապահություն, որը պետք է ապահովի անձնակազմի հետ ժամանակին և ամբողջական հաշվարկների իրականացում, նպատակային և խնայողական բյուջետային ֆինանսավորման ծախսումներ, ռացիոնալ փոխհարաբերություն բյուջետային համակարգի հետ, ինչպես նաև հաշվետվությունների ժամանակին և ամբողջական կազմում:
3. Ծառայություն, որն ապահովում է ֆինանսական հսկողություն ստորադաս ենթակառուցվածքների վրա, ինչպես բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների, այնպես էլ բյուջետային հատկացումների կարգադրիչների կառուցվածքում: Այդպիսի կառուցվածքի առաջնակարգ խնդիրը պետք է լինի միջոցների նպատակային և ռացիոնալ օգտագործումը, ստորադաս ենթակառուցվածքների եկամուտների և ծախսերի նախահաշիվների որակյալ կազմումը:
4. Վճարովի ծառայությունների բավարար ծավալների կառուցվածք, ինչպիսին են գանձատան առևտրային կազմակերպությունները, որոնք իրենց վրա կարող են վերցնել իրական ժամանակում ֆինանսական հոսքերի կառավարումը և միաժամանակ ապահովեն ստացված միջոցների օգտագործման առավելագույն արդյունավետությունը կամ, եթե կա ֆինանսական հոսքե-

րի անբավարարություն, ապա դրանց հավաքագրումը պետք է լինի հնարավոր նվազագույն գնով (ծախսումով):

5. Խոշոր բյուջետային կազմակերպություններում համանման ծառայություններ, որոնք թեկուզ և չեն ընդգրկում այդպիսի պարտավորությունների լայն շրջանակ, ինչպես առևտրային կառույցներում, է ապա անհրաժեշտ է իրականացնել ծախսերի վերլուծություն, կապված բյուջետային կազմակերպության գործունեության հետ:

Եթե համեմատենք առևտրային կառույցների և բյուջետային կազմակերպությունների ֆինանսական ծառայությունների գործառույթները, ապա կարելի է նկատել ինչպես որոշակի նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Այսպես, առևտրային կազմակերպությունների ֆինանսական ծառայության գործառույթներից մեկը, դա ֆինանսական պլանավորման ավանդական կազմակերպումն է: Այդ գործառույթը գտել է նաև լայն կիրառություն նաև բյուջետային կազմակերպություններում, ըստ որի պարտադիր կերպով իրականացվում են տարվա, եռամսյակների և նախահաշվային կտրվածքով պլանավորում: Կապիտալ ներդրումների կատարման ժամանակ բյուջետային կազմակերպությունների ֆինանսական ծառայությունները, ինչպես նաև առևտրային կառույցները, պարտադիր կարգով հաշվարկում են նախատեսվող ներդրումների արդյունավետությունը:

Առևտրային կառույցների ֆինանսական ծառայությունների համար որպես գլխավոր խնդիր հանդիսացավ է մասնակցել գնային քաղաքականության հարցերին: Բյուջետային կազմակերպության նշված գործառույթները իրականացվում են այն դեպքերում, երբ նրանք կատարում են վճարովի ծառայություններ և ստանում արտաբյուջետային միջոցներ:

Ներքին և արտաքին ֆինանսական աղբյուրների ընտրությունը, ինչպես նաև դրանց օպտիմալ հարաբերակցությունն ավելի կարևոր է

բյուջետային կազմակերպության, քան բաժնետիրական ընկերությունների համար: Բյուջետային կազմակերպությունների ֆինանսական ծառայությունների հնարավորությունները ավելի սահմանափակ են, քանի որ այդ կազմակերպություններն ունեն սահմանափակ իրավունքներ վարկերի ստացման և արժեթղթերի շուկաներում: Միաժամանակ, բյուջետային կազմակերպությունների համար խիստ սահմանափակ են նաև ֆինանսական ռեսուրսների կառավարման գործառնությունները: Այդ ուղղությամբ համեմատաբար լայն հնարավորություններ ունեն բյուջետային միջոցների գլխավոր կարգադրիչների. ֆինանսական ծառայությունները: Ընդ որում նրանց ֆինանսական ռեսուրսների և դրամական հոսքերի կառավարման գործառնությունները չեն սահմանափակվում միայն իրենց ստորաբաժանման շրջանակներում, այլ անմիջականորեն ընդգրկվում են նաև դրանց ենթակա ստորաբաժանումների գործունեությունը:

Բյուջետային կազմակերպություններում ինչպես հաշվառմանը, այնպես էլ հսկողական և վերլուծական գործառնություններին տրվում է հատուկ նշանակություն:

Մասնավորապես, ֆինանսական գործունեության հսկողության բարդ և ճյուղավորված համակարգը պահանջում է իրականացնել հատուկ և մանրակրկիտ համադրում փաստացի և պլանային հաշվետվական տվյալների, փաստացի ծախսերի և նախատեսված նորմատիվների, նախահաշիվներում նախատեսված բյուջեից հատկացումների և դրանց նպատակային օգտագործումների միջև: Եթե առևտրային կազմակերպության ֆինանսական ծառայությունը կարող է թույլ տալ պլանային ցուցանիշների հետ համեմատական որոշակի շեղումներ, ապա բյուջետային միջոցների ստացողների մակարդակով այն հնարավոր է միայն նախահաշվի համապատասխան փոփոխության դեպքում:

Մեկ այլ գործառնությով, առևտրային կազմակերպությունների ֆինանսական ծառայությունները, իրենց հայացողությամբ իրակա-

նացնում են հարաբերություններ բանկերի և ապահովագրական ընկերությունների հետ: Սակայն բյուջետային կազմակերպությունների ֆինանսական ծառայությունների ազատ գործելու գծով գործողությանների իրականացումը ուղղությամբ, նույնպես խիստ սահմանափակ են: Այսպես, բյուջետային միջոցների հաշվին իրականացվում է միայն պարտադիր ապահովագրություն, որը մասամբ, նախատեսում է պարտադիր անձնական ապահովագրություն, զինվորականների, հարկային ծառայությունների աշխատակիցների, հրշեջային և այլ անձանց համար, որոնց գործունեությունը կապված է մեծ ռիսկերի հետ, ինչպես նաև քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն տրանսպորտային միջոցների սեփականատերերի համար: Ապահովագրական պատասխանատվության ծավալները այդ դեպքում նախատեսվում են օրենսդրական կարգով, իսկ ապահովագրական ընկերությունը ընտրվում է հանրային մրցույթի միջոցով:

6.2. Բյուջետային կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական հսկողությունը

ՀՀ Գանձապետական մարմինը ՀՀ Կենտրոնական բանկի բանկի կողմից մշակված կանոնակարգով, սահմանում է հաճախորդների դրամարկղի մնացորդի միասնական չափաքանակը: Հասույթի այն գումարը, որը մուտքագրում է տվյալ հիմնարկության դրամարկղ, ամբողջովին գրանցվում է Գանձապետական մարմնի վարկային կազմակերպությունում բացված հաշվի վրա, հետագայում պետական բյուջեի համապատասխան հաշվին հաշվեգրելու համար:

Բյուջետային կազմակերպություն ստացված կանխիկ դրամը ենթակա է գրանցման դրամարկղային գրքում: Աշխատավարձի վճարման նպատակով կանխիկ դրամի մուտքագրման, ձևակերպ-

ման ժամանակ, բյուջետային կազմակերպությունների ֆինանսական ծառայությունը կենտրոնական գանձապետարանի մարմնի դրամական չեկերի հետ միաժամանակ ներկայացնում է ֆիզիկական անձանց եկամտահարկի հարկային մարմնին հաշվին փոխանցելու վճարման հանձնարարականը և վճարումներ պետական արտաբյուջետային ֆոնդին: Առանց այդ հանձնարարականների ներկայացման գանձապետական մարմինները աշխատավարձի նպատակով կանխիկ դրամ ստանալու դրամական չեկերի ձևակերպումներ չեն կատարում:

Բյուջետային կազմակերպությունները չեկային գրքույկները ստանում են գանձապետական մարմնից, որը վարում է այդ բյուջետային կազմակերպության դիմային հաշիվը: Բյուջետային կազմակերպության ֆինանսական ծառայությունը սահմանված ժամանակներում ներկայացնում է Գ-անձապետական մարմնին դրամարկղային հայտ հաջորդ եռամսյակի համար:

Կանխիկ դրամ ստանալու համար ստացողը գումարի ստացման նախորդ օրը ներկայացնում է գանձապետական բաժանմունք լրացված դրամական չեկ: Չեկի դիմային կողմում լրացվում է գանձապետական բաժանմունքի անունից և ձևակերպվում է նրա ղեկավարի և գլխավոր հաշվապահի (նրանց տեղակալների) ստորագրություններով և հաստատվում կնիքով: Չեկի հակառակ երեսում գրվում է գումարը ստացող հաճախորդի անվանումը:

Գ-անձապետական մարմնի ներկայացուցիչը ստուգում է դրամական չեկի և վճարման հանձնարարականի համապատասխանությունը՝ գումարը, նշված թվերով, և տառերով, ստորագրություններ քարտի նմուշի ու ներկայացված կնիքի համեմատությունը և ֆինանսավորման ծավալի առկայությունը, ՀՀ բյուջետային դասակարգման ցուցա-նիշների համապատասխան:

Ստուգված և կատարման ընդունված վճարման հանձնարարականի երկրորդ օրինակի վրա գանձապետական մարմնի ներկայա-

ցուցիչը, որը իրականացնում է, ստուգում դրոշմում է ստուգված է: Կատարման ընդունված կանխիկ դրամի ստացման չեկերը և վճարման հանձնարարականները ձևակերպվում է ու վավերացվում գանձապետական մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի (նրանց տեղակալների) ստորագրություններով և հաստատվում կնիքով:

Գումարը ստացող անձը, ում անունով է դուրս գրված չեկը, այն ներկայացնում է բանկի բաժանմունք, որտեղ բացված է գանձապետական բաժանմունքի հաշիվը: Չեկին կից ներկայացնում է իր անձնագիրը:

Գանձապետական մարմինը իր բանկային հաշվի քաղվածքի հիման վրա արտացոլում է դրամարկղի ծախս, տրված կանխիկ դրամի համապատասխան: Չօգտագործված կանխիկ դրամի վերադարձը իրականացվում է ստացողի կողմից բանկ հանձնելու միջոցով: Այն իրականացվում է ոչ ուշ քան ստացման հաջորդ օրը, միջոցներ ստացողը պարտավոր է ներկայացնել անդորագիր, որը հաստատում է չօգտագործված միջոցների վերադարձը գտանձապետական մարմնի բանկային հաշվին:

Իր հաշվից բանկի քաղվածքը ստանալիս կենտրոնացված գանձապետական մարմինը կատարում է գրառում ֆինանսական միջոցներ ստացողի համապատասխան հաշվում, կանխիկ դրամի վերադարձի անդորագրի հիման վրա:

Վերստուգումն իրենից ներկայացնում է պարտադիր հսկողական աշխատանքների իրականացման համակարգ, որում ներառվում են՝ փաստացի օրինականության ստուգումն ու ֆինանսական գործընթացների հիմնավորվածությունը, վերստուգման ժամանակահատվածում հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ճշգրիտ արտացոլումը, տվյալ բյուջետային հիմնարկի ղեկավարի ու գլխավոր հաշվապահի և այլ անձանց կողմից նորմատիվային ակտերով սահմանված կարգով կատարված գործողությունների օրինականությունն ու պատասխանատվությունը:

Ստուգումն իրենից ներկայացնում է միասնական հսկողական գործողության իրականացում կամ գործերի վիճակի հետազոտում՝ ստուգվող բյուջետային կազմակերպության գործունեության որոշակի տեղամասում:

Վերստուգման նպատակն ամբողջական առումով, դա հսկողության իրականացում է ՀՀ օրենսդրությանը համաձայն գործող նորմաներին, նորմատիվներին և նախահաշիվներին համահունչ՝ տնտեսական ու ֆինանսական գործընթացների կատարման, նրանց հիմնավորվածությունը, ունեցվածքի առկայությունը և շարժը ստանձնած պարտավորությունների, նյութական և աշխատանքային ռեսուրսների օգտագործման նկատմամբ:

Միաժամանակ վերստուգումն իրականացվում է պլանային և արտապլանային կարգով պետական բյուջեի միջոցների մուտքերը ու սեփական կապիտալ համարվող ծախսերի, արտաբյուջետային միջոցների օգտագործման և ունեցվածքից ստացված եկամուտների նկատմամբ:

Ստուգման և վերստուգման բոլոր մասնակիցներին տրվում է հատուկ վկայական, վերահսկիչ-վերստուգիչ մարմնի ղեկավարի կողմից, որը ստորագրվում և հաստատվում է վերջինիս կողմից կնիքով: Միաժամանակ, բացի դրանից, վերահսկիչ և վերստուգիչ մարմնի աշխատակիցը պարտադիր կարգով իր մոտ պետք է ունենա նաև ծառայողական վկայական:

Վերստուգիչ խմբի կազմը և նրա ղեկավարը, վերստուգման անցկացման ժամկետները, որոշվում է վերահսկիչ-վերստուգիչ մարմնի կողմից՝ ելնելով նախատեսվող աշխատանքի ծավալից, վերստուգման կոնկրետ խնդիրներից և վերստուգվող կազմակերպության առանձնահատկություններից: Վերստուգման անցկացման ժամկետները չեն կարող գերազանցել 45 օրացուցային օրը:

Վերստուգման սկզբնական ժամկետի երկարացումը թույլատրում է վերահսկիչ-վերստուգիչ մարմնի ղեկավարը, վերստուգում կատարող խմբի ղեկավարի միջնորդությամբ:

Վերստուգման կոնկրետ հարցերը որոշվում են նախօրոք նախատեսված ծրագրով կամ վերստուգման հիմնական հարցերի ցուցակով: Վերստուգման ծրագիրը ընդգրկում է նրա թեման, վերստուգման ժամկետը, հիմնական օբեկտների ցանկը և այն հարցապնդումները, որոնք ենթակա են վերստուգման և հաստատվում են վերահսկիչ-վերստուգիչ մարմնի ղեկավարի կողմից:

Վերստուգվող բյուջետային կազմակերպության ղեկավարը պետք է ծանոթանա, վերստուգման անցկացման իրավունքի վկայականի, վերստուգման հիմնական խնդիրների և վերստուգման աշխատանքների մասնակիցների հետ, լուծել կազմակերպատեխնիկական հարցերը և ֆինանսական ծառայության ղեկավարի ու վերստուգիչ խմբի ղեկավարի հետ համատեղ կազմել վերստուգման աշխատանքային պլան:

Վերստուգող բյուջետային կազմակերպության ղեկավարը պարտավոր է ստեղծել նորմալ պայմաններ վերստուգիչ խմբի մասնակիցների համար, տրամադրել անհրաժեշտ սենյակներ, կազմատեխնիկայի և կապի միջոցներ, գրենական պիտույքներ, ապահովել համակարգչային աշխատակիցներով և այլն:

6.3. Վերստուգման աշխատանքների խնդիրները

Բյուջետային կազմակերպության վերստուգման հիմնական խնդիրն է ստուգել նրա ֆինանսատնտեսական գործունեությունը, ուստի դրա հետ կապված տվյալ բյուջետային կազմակերպության ֆինանսական ծառայության ղեկավարը պետք է կազմակերպի փաստաթղթերի նախապատրաստումը հետևյալ ուղղություններով.

1. կազմակերպության կողմից իրականացվող գործունեության կանոնադրական փաստաթղթերի կազմման,
2. նախահաշվային նշանակության հաշվարկների հիմնավորվածությունը, ծախսերի նախահաշիվների օգտագործման,
3. բյուջետային միջոցների նպատակային օգտագործմանը,
4. դրամական միջոցների և նյութական արժեքների պահպանման ասպահովմանը,
5. պետական արտաբյուջետային միջոցների գոյացման և ծախսմանը,
6. ֆինանսական կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման վարման ճշտության ու հաշվետվությունների կազմման,
7. դրամական միջոցների, արժեթղթերի, հաշվարկային և վարկային գործարքների հիմնավորվածության,
8. բյուջետային և արտաբյուջետային հիմնադրամների ամբողջական հաշվարկների,
9. հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հետ, կապված գործարքների և ներդրումների,
10. ֆիզիկական անձանց հետ, աշխատավարձի և այլ հաշվարկների արտադրական ծախսերի հիմնավորվածության, կապված ընթացիկ գործունեության և կապիտալ բնույթի ծախսերի հետ,
11. ֆինանսական արդյունքների ձևավորման և դրանց բաշխման:

Վերստուգող խմբի ղեկավարի պահանջով չարաշահումների փաստեր կամ ունեցվածքի փչացման դեպքեր հայտնաբերելու ժամանակ, վերստուգվող կազմակերպության ղեկավարը պարտավոր է կազմակերպել դրամական միջոցների և նյութական արժեքների գույքագրում: Գույքագրման ժամկետները և տեղամասերը որոշում է վերստուգիչ խմբի ղեկավարը համաձայնեցնելով վերստուգվող կազմակերպության ղեկավարի հետ:

Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումը իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- կանոնադրական, գրանցման, պլանային, հաշվապահական, հաշվետվական և այլ փաստաթղթերի ստուգման, ձևով ու բովանդակությամբ ՀՀ օրենսդրության համապատասխանության և նպատակով արտադրական գործընթացներին համահունչ ճշտության վերաբերյալ,
- իրականացվող գործառնությունների փաստացի համապատասխանությանը, ստուգվող սկզբնական փաստաթղթերի, այդ թվում փաստերով ստացված և տրված դրանցում նշված դրամական միջոցների և նյութական արժեքների, փաստացի կատարած աշխատանքների և ծառայությունների մատուցման և այլնի վերաբերյալ,
- փաստացի հսկողության ընթացակարգի կազմակերպման, նյութական և դրամական միջոցների առկայության և շարժի, ծախսերի ձևավորման ճշտության, արտադրանքի ամբողջովին մուտքագրման, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալների հավաստիության վերաբերյալ,
- արտադրական գործառնությունները հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների մեջ արժանահավատ արտացոլման, այդ թվում՝ սահմանված կարգով հաշվապահական հաշվառման գրանցամատյանների գրառումների համադրումը սկզբնական փաստաթղթերի տվյալների հետ և սկզբնական փաստաթղթերի թվաբանական ստուգումների վերաբերյալ,
- բյուջետային միջոցների օգտագործման և պահպանման ստուգումների, պետական արտաբյուջետային միջոցների, պետական սեփականություն հանդիսացող ունեցվածից եկամուտների և այլ պետական միջոցների վերաբերյալ,

- անհրաժեշտության դեպքում ստուգումների կազմակերպումն և ներքին հսկողության վիճակի վերաբերյալ:

Վերստուգման խմբի մասնակիցները, ելնելով ստուգումների ծրագրերից, ինքնուրույն են որոշում օգտագործել այս կամ այն վերստուգման եղանակների, տեղեկատվության ստուգման, վերլուծական աշխատանքների, տվյալների ծավալների, ապահովելով օգտագործման անհրաժեշտությունը և հնարավորությունը ձեռք բերելու պահանջվող տվյալները և ապացույցները:

Վերստուգումը ձևակերպվում է համապատասխան ակտով, որը ստորագրում են վերստուգիչ խմբի ու վերստուգվող կազմակերպության ղեկավարները և գլխավոր հաշվապահը: Այնուհետև մեկ օրինակ ձևակերպված ակտից հանձնվում է վերստուգվող կազմակերպության ղեկավարին, ստորագրությամբ նշելով ստացման ամսաթիվը:

Վերստուգվող կազմակերպության ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի խնդրանքով, վերստուգիչ խմբի ղեկավարի համաձայնությամբ, կարող է հատկացվել 5 աշխատանքային օր վերստուգման ակտին ծանոթանալու և հաստատելու համար:

Վերստուգման ակտի նկատմամբ առարկություններ և դիտողություններ ունենալու դեպքում վերստուգվող կազմակերպության ֆինանսական ծառայության ղեկավարն իր ստորագրությամբ գրավոր ձևով ներկայացնում է առարկություններ կամ դիտողություններ վերստուգիչ խմբի ղեկավարին, որը միացվում է վերստուգիչ ակտի նյութերին և հանդիսանում է նրա անբաժան մասը:

Վերստուգիչ խմբի ղեկավարը պարտավոր է ստուգել բերված առարկությունները կամ դիտողությունները և տալ դրանց վերաբերյալ գրավոր եզրակացություն, որը վերստուգիչ կազմակերպության ղեկավարի քննարկումից և հաստատումից հետո ներկայացվում է վերահսկվող կազմակերպությանը, ստուգման նյութերին կցելու համար:

Այն դեպքում, երբ վերստուգվող կազմակերպության պաշտոնատար անձը հրաժարվում է ակտը ստորագրելուց և ստանալուց, վերստուգիչ խմբի ղեկավարն ակտի վերջում կատարում է գրառում, նրան ակտի հետ ծանոթանալու և ստորագրելուց ու օրինակն ստանալուց հրաժարվելու մասին:

Ստուգման ակտը կազմված է ներածությունից և բացատրական մասից:

Ստուգման ակտի ներածական մասը պետք է բովանդակի հետևյալ տեղեկությունը.

1. ստուգման թեմայի անվանումը,
2. ամիս, ամսաթիվ և ակտի կազման վայրը,
3. ում կողմից և ինչի հիման վրա է կատարվել ստուգումը (վկայականի համարը և ամսաթիվը, ինչպես նաև նշում պլանային բնույթի վերստացման կամ հանձնարարականի վրա հղում),
4. ստուգման ժամանակահատվածը և ստուգման անցկացման ժամկետը,
5. կազմակերպության լրիվ անվանումը, ռեկվիզիտները և հարկ վճարողի համարը,
6. գերտեսչական ենթակայությունը և վերադասի անվանումը,
7. հիմնադիրների մասին տեղեկություններ,
8. կազմակերպության գործունեության տեսակները և հիմնական նպատակները,
9. գործունեություն առանձին տեսակների իրականացման համար, լիցենզիաների առկայությունը,
10. վարկային կազմակերպություններում ունեցած բոլոր հաշիվների ռեկվիզիտները:

Ակտի բացատրական մասը պետք է կազմված լինի բաժիններից ստուգման ծրագրում նախատեսված խնդիրներին համապատասխան, նշված վերստացման ծրագրում:

Ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների դեպքերի նկարագրությունը պետք է պարունակի հետևյալ պարտադիր տեղեկությունը՝ ինչպիսի օրենսդրական, այլ նորմատիվային իրավական ակտեր կամ նրա առանձին դրույթներ են խախտվել, ում կողմից, որ ժամանակահատվածում, ինչպես և ինչով է բնութագրվում խախտումը, փաստաթղթերով հիմնավորված վնասի չափը և այդ խախտումների այլ հետևանքները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
2. ՀՀ պետական բյուջեն 2005-2010թթ
3. Ա. Բայադյան. Ֆինանսական վերլուծություն: Եր.– 2008թ.
4. Ա. Բայադյան. Ֆինանսա-վիճակագրական բացատրական բառարան: Եր – 2008թ.
5. Վ. Հարությունյան. Բյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը ՀՀ-ում: Եր.– 2003թ.
6. ՀՀ համախմբված բյուջեն. Ուսումնական ձեռնարկ Յու. Ալավերդյանի խմբագրությամբ և ղեկավարությամբ: Եր.– 2007թ.
7. «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ»: Գլխ. խմբագիր պրոֆեսոր Լ.Հ. Բադանյան: Եր. «ՄՈԱ» ՍՊԸ 2010թ.
8. Финансы бюджетных организаций. Учебник под редакции д.э.н, профессора Г.Б. Полока, М. “Вузовский учебник” 2007г.

Հավելված 1.

Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից
_____ թվականին

Հաստատված գումարով _____ դրամ
(գումարը թվերով և տառերով)

այդ թվում աշխատավարձի ֆոնդ (աշխատանքի վճարման ֆոնդ)
_____ դրամ

Բյուջետային միջոցների վերադաս կարգադրիչ _____
(ստորագրություն)

_____ 2009թ.
(ստորագրության վերձանում)

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ
2010 թիվ

Հիմնարկություն _____

Հասցե _____

Անհատական (ընդհանուր) _____

Նախարարություն, գերատեսչություն _____

Բաժին, ենթարաժին _____

Ծախսերի տեսակը _____

Չափման միավորը. հազար դրամ _____

Հավելված 2.

Բյուջետային կազմակերպության ծախսերի նախահաշիվ

Ծախսերի տնտեսագիտական դասակարգում (հոդվածների անվանումը)	Կող		հաշվարկվում է կազմակերպություն (հիմնարկով)	Հաստատված է				
	հոդվածներ	տողեր		Ընդամենը	այդ թվում ըստ եռամսյակների			
					I	II	III	IV
1	2	3	4	5	6	7	8	9
Ընթացիկի ծախսեր								
Ապրանքների գնում և ծառայությունների դիմաց վճարում								
Պետական ծառայողների աշխատանքի դիմաց վճարում – ընդամենը								
այդ թվում՝ քաղաքական ծառայողների								
Աշխատավարձի հաշվարկում (ապահովագրական վճարներ քաղաքացիների պետական սոցիալական ապահովագրություն)								
Մատակարարների ապրանքների ձեռք բերում և ծախսվող նյութեր – ընդամենը								
այդ թվում՝ դեղանյութեր								
փափուկ գույք և արտահագուստ սննդամթերք								
վառելիքա-քսուկային նյութեր								
այլ ծախսվող նյութեր								
գործուղման և ծառայողական տեղափոխումներ								
տրանսպորտային ծառայությունների վճարներ								
կապի ծառայության վճարներ								
կոմունալ ծառայության վճարներ								
այդ թվում՝ շինությունների պահպանման վճարներ								
շինությունների լուսավորման վճարներ								
շինությունների ջրամատակարարման վճարներ								

Հավելված 2-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9
շինությունների վարձավճարներ								
ապրանքների գնման և ծառայությունների վճարման ընթացիկ ծախսեր – ընդամենը								
այդ թվում՝ սարքավորումների և գույքային ընթացիկ վերանորոգման ծախսեր								
շենքերի և շինությունների ընթացիկ վերանորոգման ծախսեր								
ընթացիկ ծախսեր								
դասագրքեր								
այդ թվում՝ բնակչության տրանսֆերտներ–ընդամենը								
թոշակների և նպաստների վճարներ								
կրթաթոշակներ								
բնակչության այլ տրանսֆերտներ								
հիմնական միջոցների գծով կապիտալ ներդրումներ								
ոչ արտադրական սարքավորումների ձեռք բերում								
ոչ արտադրական նշանակության օբյեկտների վերանորոգում								
ԸՆԳԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ								

ՑԱՆԿ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների

1. Պրոֆ. Խ. Երիցյանի անվան Գորիսի պետական գյուղ. քոլեջ
2. Ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան Շիրակի պետական գյուղ. քոլեջ
3. Պրոֆես. Ա. Մալանթարյանի անվան Ստեփանավանի պետական գյուղ. քոլեջ
4. Ակադեմիկոս Թամաշևի անվան Գավառի պետական գյուղ. քոլեջ
5. Վանափորի պետական գյուղատնտեսական քոլեջ
6. Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ
7. Ս. Լուկաշինի անվան Արմավիրի պետական գյուղատնտեսական քոլեջ
8. Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջ
9. Ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան Նոր-Գեղի պետական գյուղատնտեսական քոլեջ
10. Հանրապետական անասնաբուժական համաճարակային և ախտորոշիչ կենտրոն
11. Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայություն
12. Հայանտառ
13. Ագրոքիմիայի ծառայություն
14. Անասնաբուժության և անասնաբուժության գիտական կենտրոն
15. Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն
16. Հրանտ Պետրոսյանի անվան հողագործության, ագրոքիմիայի և մելորացիայի գիտական կենտրոն
17. Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն
18. Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն
19. Սերմերի գործակալություն
20. Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն
21. Բանջարակոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն

“Ֆինանսներ և վարկ” ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Բայադյան
Նույն ամբիոնի ավագ դասախոս,
տնտեսագիտության թեկնածու
Վիկտոր Կարճիկյան

Ашот Баядян
Заведующий кафедрой “Финансы и кредит”
доктор экономических наук, профессор.,

Виктор Карчикян
Кандидат экономических наук, ст. препод.,
кафедры “Финансы и кредит”

Финансы бюджетных организации
(краткое учебное пособие)

Համակարգչային ձևավորումը՝ Լիլիթ Առաքելյանի



Տպագրության եղանակը՝ ռիզոգրաֆիա:
Ֆորմատ՝ 60x84 1/16, թուղթ՝ օֆսեթ, N 1:
Ծավալ՝) .5 տպ. մանուլ: Տպաքանակ՝ 800:

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:
Ք. Երևան, Պուշկինի 40, հեռ. 58.22.99
E-mail: info@limush.am